


Հանրապետական



ԼԱԿԱՐԻ  
ՈՐՍԸ

Հայրենիք



Վ Ա Ն Ա Ն Մ Ի Ր Ա Ք Յ Ա Ն

891.99-93  
5-76

ՍՅՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Լ Ա Լ Վ Ա Ր Ի Ո Ր Ս Ը

Պ Ո Ե Մ

~~13009~~  
A 28595




Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

Պատկերազարդումը՝ Եկարիչ  
ՀՈՎՀ. ՇԱՎՍՐՇԻ

**В. МИРАКЯН**  
**ОХОТА НА ЛАЛВАРЕ**

(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1948





Ծագում է մանուկ արևը դարնան  
 Կովկաս լեռների ձյունի պատնեշից,  
 Չարթնում են մեկ-մեկ սարերն աննման  
 Չմրան անվրդով քնի մշուշից:  
 Ահա Լավարի<sup>1</sup> վիթխարի ուսին  
 Բազմում է արիին թարմացած ուժով,  
 Սարեր ու ձորեր իրար երեսին  
 Նա, ում են, ժպտում ամպի մշուշով...  
 Վերջին ձյուներն էլ արդեն հալ ընկան,  
 Արտասովեց իսկույն լեռների հսկան.  
 Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,  
 Ամեն մի թփից բյուլբյուլ է խոսում.  
 Ե՛վ դալար հովիտ, և՛ ժայռի կրճքեր  
 Արձագանք տալով գարուն են հնչում.  
 Չմրան փարախից հովվական երգեր  
 Չեփյուռի թևով սարերն են թռչում.  
 Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի  
 Բացվում է, ժպտում կոկոնից զվարթ,  
 Փարթամ գեղության ոգին Գուգարքի  
 Շնչում է գարնան բյուրով անաղարտ.

<sup>1</sup> Լուվա ամենաբարձր սարը:

Ամպերն էլ իրար համբույրներ տալով,  
 Չվում են կայտառ, Լալվարը գրկում,  
 Առաջին անգամ խիստ որոտալով,  
 Գուգարք աշխարհին ողջույն են երգում.  
 Եվ հայր ենիքում փայլակ-կայծակի  
 Գիշերվա դրոշմած գաղտնի համբույրներ  
 Երգում են երկրին սերը երկնքի,  
 Դողում են սիրուց սարեր ու ձորեր.  
 Եվ խորհրդավոր մի թովիչ ձայնով  
 Խոսում են նրանք, իրար հետ փարվում,  
 Երգում են, խնդում, հազար բերանով  
 Լալվարի վիթխար հասակը գովում:

2

Ահա գարնան հետ և շարան-շարան  
 Գաշտավայրերից դեպի գով սարեր  
 Չգվեց սայլերի, ուղտերի քարվան —  
 Փախչում են շողից թե՛ թուրք, թե՛ հայեր:  
 Թնդում են ձորում գանգի հնչյուններ,  
 Չիերի խրխինջ, պայտերի դուխուն,  
 Մեկ-մեկի կցած անվերջ քարվաններ  
 Քաշում է նառը, ահեղ մռնչում.  
 Որը տանում է ալաշխի<sup>1</sup> քեչան,  
 Կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան<sup>2</sup>,  
 Որն էլ զարդարված գիր<sup>3</sup> ու փնջերով՝  
 Օրորվում, անցնում լեռան լանջերով.

<sup>1</sup> Հովվական վրանի մեծ տեսակը:

<sup>2</sup> Բարակ ճիպոտներից հյուսած վրանի շրջապատ:

<sup>3</sup> Թղթերում կարած չար աչքից ապահովող աղոթքներ:

Բայց նաոն ինքնագոհ քալուամ է հանգարտ<sup>1</sup>  
 Բոժոժ ու զանգեր վզին ու կրծքին,  
 Եվ օրորելով կապերտներ ու զարդ,  
 Գեղեցիկ հարսն է նա տանում մեջքին.  
 Մերթ բարկանալով կանգնում է հպարտ,  
 Մերթ փրփուլը թափում կատղած բերանով,  
 Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ,  
 Նա պարծենում է գեղեցիկ բեռով:  
 Բռնել է ճամփեն խիստ իրարանցում,  
 Գոփում են ձիեր, սանձերը կրծում —  
 Ազնիվ մետաքսից ոսկեթել գործած, —  
 Աղաջարիներ<sup>1</sup> թամբերին գլցած,  
 Հուժկու կրծքներից կապած թալիսման<sup>2</sup>,  
 Արևելյան ճոխ արծաթն ու ոսկին,  
 Ճերմակ դաթիբան, քողն ամպի նման  
 Փռափրում են սիրուն հարսների դեմքին:

3.

Լեռների տոնն է. մարդ և անասուն  
 Ուրախ երգերով դիմում են սարեր,  
 Մոռնալով ձմրան քաշած վայնասուն,  
 Ծաղկի փնջերով անցնում են ձորեր.  
 Անցնում են արագ քոչ-քոչի միջով.  
 Գարնան արևից փայլում են դենքեր,  
 Եվ թարմ կենսաբույր թավիշ կանաչով  
 Բացվում են, ժպտում սարվորի դեմքեր:

<sup>1</sup> Մետաքսից գործված ձիու ծածկոց:

<sup>2</sup> Թղթերում կարած՝ չար աչքի դեմ աղոթքներ:

Մայուամ են, բայուամ դառնուկն ու մաքին,  
 Թնդում կովերի, հորթերի բառաչ.  
 Իսկ տըրտընգալով գոմեշը ձագին  
 Կանչում է դանդաղ վազելով առաջ.  
 Վազում են հոգնած շները հոտի  
 Եվ լեզուս հանած թանչին են տալիս.  
 Կավում է հանկարծ ձայնը լակոտի,  
 Որ քոչից ընկած՝ կալանչ է դալիս:  
 Փոքրիկ երեխան պինդ մեջքին կապած՝  
 Խեղճ հովվի կինն էլ վազում է ոտքով,  
 Օգնում է մարդուն գոհ և սրտաբաց  
 Բախտի որոշած ծանր վիճակով:

4.

Քարվանի ծայրը սարերը հասավ,  
 Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ.  
 Վրան-վրանի հետևից բռավ  
 Ծաղիկների մեջ գուչն-գուչն սիրավետ.  
 Դաշտերից խանձված, սառ ջրի կարոտ՝  
 Գալիս են, իջնում ամեն մի ամառ.  
 Լոք<sup>1</sup>, Լալվար, Լեջան<sup>2</sup> աղբյուրների մոտ  
 Շոգերից ազատ ապրելու համար:  
 Ալաշուխ, դադա<sup>3</sup>, անպերջ վրաններ,  
 Շրջան կազմելով սառն աղբրի ավին,  
 Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,  
 Հենվում են մեկ-մեկ բարձր քարափին:

<sup>1</sup> Լոռվա սարերից մեկը:

<sup>2</sup> Լոռվա սարերից մեկը:


<sup>3</sup> Հովվական վրանի փոքր տեսակը:

Գուգարք սարերի՝ սիղավեա լանջին  
 Բազմել են հայի, թուրքի բինաներ,  
 Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին՝  
 Գեռ երերում են ուղտի քարվաններ.  
 Խրխնջում է ձին, կովը բառաչում,  
 Բոլորն էլ իրանց յուրդն են ճանաչում.  
 Մայում է անուշ ամլիկը՝ գառան,  
 Սարեր ու ձորեր նորից կյանք առան:

5.

Գիշերը հասավ, մթին է ճամփան.  
 Մարում է կամաց աղմուկը քոչի.  
 Առվակի ափին քարվաններն իջան.  
 Կանչում են՝ «Տղերք, ապրանք չկորչի»:  
 Ձիերը շուկեր, ուղտերի քարվան,  
 Մայլերի ճրուռոց, ոչխար ու տավար,  
 Գտնելով ձորում գիշերն իջևան,  
 Հանգիստ են առնում մյուս օրվա համար:  
 Կրակի վրա, առվակի ափին  
 Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,  
 Մի տեղ էլ կորած գառանն ու հորթին  
 Սար ու ձոր ընկած հովիվն է կանչում.  
 Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝  
 Ուտում են նրանք կաթն ու խորոված.  
 Գիշերն էլ արդեն մեջում է, լուում,  
 Հոգնած քոչվորին հանգիստ քուն բերում.  
 Միայն մի կով է դարձյալ բառաչում  
 Եվ քունը կտրած հորթուկին կանչում.

1 Մոր հետ անբաժան ապրող և ծծող գառ:



Հսելով նրան դիշերն անդադար,  
Հևում է տխուր ծերունի անտառ:  
Ամպի փեշերն էլ կախած մի ծալրին՝  
Հալվարն էլ կարծես նույն վիշտն է զդում,  
Ինչպես վիրավոր արծիվը ժայռին,  
Թևերը փռած քոչվորին հսկում:

6.

— Հսել եք, տղերք, ում ալաշուխն է  
Հալվարին բազմած արծվի նման.  
Հսել եք՝ էն ում օջախի ծուխն է  
Խեղճ ու նաչարին միշտ լինում դարման.  
Հսել եք՝ ինչպես բազեն ինքնակամ  
Նրանից ազատ որս չի պլտրրտում.  
Նրա մի ձենը, անունը անգամ  
Մարդուն, հարամուն սարսափ են ազդում:  
Եվ ուզում է միշտ ամեն մի սարվոր  
Էն ալաշուխին լինել դրացի,  
Հիշելով նրա տիրոջն ալևոր,  
Առանց օրհնելու չի նստում հացի:  
— Շատ բան ենք լսել Ավագի մասին,  
Բայց դեռ կարոտ ենք նրա երեսին,  
Քսած թե արթուն, թեկուզ երազում  
Ամենքն էլ նրա մասին են խոսում.  
Պատմում են ահով դաշտին ու սարին,  
Թե ինչպես է նա պատժում միշտ չարին,  
Թե ինչպես էրեն փախչելիս հովտում  
Հեռվից էլ նրա ձենն է ճանաչում.  
Բայց, ապի, ապի, չենք տեսել նրան,

Երգիր Ավագից մի քանի բերան.  
 Մենք կտանք առատ քեզ եղ ու պանիր,  
 Դու իգիթներին լավ գովաբանիր:  
 Եվ նա լարելով նորից սիմերը,  
 Երգում է՝ որքան քաջ են հները.  
 — Ավագ որսկանի անունն է մենակ  
 Մարերին հայտնի ամեն մի մարդու,  
 Ավագ որսկանի գոչյունն է մենակ  
 Լավարի գոռոզ սրտաից ազգու.  
 Մանուկ օրերից նա որք մնալով,  
 Ապրել է ինչպես սև ամալը սարին.  
 Օրոր է երգել քամին սուլելով,  
 Եվ նա ննջել է մամուռտած ժայռին.  
 Մթին ձորերի ահավոր կիրճում  
 Միրել է թանձր վառողի ամպեր.  
 Ուր փայլակ-կայծակ մահ են շառաչում,  
 Գրկել է կայտառ սլաք ու շանթեր.  
 Ընկերն է եղել մի հին հրացան,  
 Իսկ անուշ երգը՝ գնդակի բըզըց.  
 Թշնամու ջարդը ահից ցիր ու ցան,  
 Հարան-տարանը և տուր ու դմբոց:  
 Թեև նա ծեր է, ութսուն տարեկան,  
 Բայց նրա նման չկա մի որսկան.  
 Աչքի լուսի պես դեռ դենք է սիրում,  
 Երկնքի ծոցից էլ որս է բերում.  
 Դեռ հեծնում է նա ձին արագավազ,  
 Սև ամպերի հետ թռչում սար ու ձոր,  
 Դիտելով լուսնի սահը նազենազ,  
 Հիշում իր թափած արյունը ծործոր.  
 Անցնում է ձգված անտառի խորքում

Նեղ օձապտուխ ժայռու կածանը,  
Որից հոսում է, առուն աղմկում  
Կամ թե դղրդում խուլ հրացանը,  
Ուր միշտ ծարավի թշնամու արջան՝  
Նա թափառելով դիշերը անահ,  
Մռայլը դեմքին դժոխքի նման  
Նամարդի համար պատրաստել է մահ...

Չիբուխի վրա կբակ դնելով,  
Աշուղը կտրեց իր երգի թելը.  
Իսկ մեկն էլ այսպես նրան հարցնելով,  
Կրակին դարսեց նորից փայտերը:  
— Բան — ապի, ապի, դեռ չե՞ս խմացել,  
Մի նոր իգիթ կա սարերը ընկած,  
Ավագ-որսկանից ետ չի մնացել,  
Դեռ նրա պես քաջ աշխարհ չի եկած.  
Ձահեկներիս մեջ նրա հասակում  
Ոչ ոք չի եղել էնպես շնորհքով.  
Աստծու դիշերը անցնում է, դարկում  
Ամենահարուստ բեկի օբեքով.

Արյուն է կաթում էն օրը սրտից,  
Թե որ չի թոցնում ձի, տավար հանդից.  
Ո՛չ ազդ ունի նա, ո՛չ տեր-տիրական.  
Կարո է նրա անունն իսկական.  
Էլ բեզ չի մնում, որ չթալանի,  
Նրան ասում են «Դալի-էրմանի».  
Էլ նրա ահից, հարան-տարանից,  
Հեռու չեն քշում ապրանքը տանից:

Մինչդեռ խոսում էր Կարոյի մասին  
Վառ հափշտակված երիտասարդը,  
Աշուղը կանչեց, դարնելով սաղին.

— Դե, տեսե՞ք, ո՞րն է քաջ աղամարդը. —

Հսել եմ, գիտեմ էդ ավազակին.  
Բայց ուր գող կարո՞, ուր Ավագ-որսկան.  
Ավագն է՛ ինչպես Հալվարն ահագին,  
Կարոյի նման բլուրներ շատ կան.  
Թեև մարդիկ է կարոն կողոպտում,  
Ձի, տավար հանդից քշում ու փախչում,  
Բայց դուք ջահել եք, Ավագ-որսկանին  
Ինչպես որ հարկն է, չեք էլ ճանաչում.  
Կարոյի նման ձիու գողերին  
Նա իսկի մարդու տեղ էլ չի դնում:  
Որսկան եմ ասում ոչ թե արջերի,  
Որ տանձ ուտելով ապրում են մերում.  
Որսկան եմ ասում ավազակներին,  
Որոնք սարերին փորձանք են բերում.  
Որսկան եմ ասում, որ ամեն չարին  
Մատաղ է անում կարմիր գնդակին.  
Որսկան եմ ասում, որ խեղճ նաչարին  
Պահում է սիրով իր թևի տակին,  
Որ ինչպես ձյունը ամպամած սարին  
Գլուխ չթեքած նամարդի սրին՝  
Մի դաս է առել լեռներինց դաժան—  
Արլան վրեժը արյունով առնել,  
Քնած թե արթուն դենքից անբաժան՝  
Թշվառի սիրով ապրել ու մեռնել.  
Որի ձենիցն էլ գնդակ է բրզզում,  
Անցած ձորիցն էլ արյուն է հոսում,  
Եվ միշտ վառողն է ամպերով բուրում,  
Կայծակի նման շանթում, խորովում...  
Այսպես բարի է Ավագ-որսկանը—  
Խոսքը օրենք է, գործը՝ հաղթություն.

Նա տարածում է գուրսը թե տանը  
Իր ազգու ձենով սեր ու հաշտություն:

Երբ լռեց ծերի սազը զնգալով,  
Սարերից ձորեր արձագանք տալով,  
Տղերքը նորից խնդրեցին նրան.

— Այլի ջան, այլի, երգի՛ր որսկանից.

Սիմերդ անուշ, դու քաղցրաբերան,  
Մենք չենք հեռանալ քո սազի ձենից:

«Ավագ-որսկանի արած գործերը  
Շատ են ու երկար, սկսեց ծերը.

Բայց ես կպատմեմ շատերից մեկը,  
Թե ինչպես փախավ որսկանից բեզը:

Սրանից կլներ տաս տարուց էլ վաղ,  
Դրացի էր մեզ Սալմանի օբեն<sup>1</sup>.

Թալանում էր նա աջ ու ձախ անվախ,  
Աղա էր նրա ամեն մի գյաղեն<sup>2</sup>:

Մի օր գուրս եկավ Սալմանի բուղեն<sup>3</sup>,  
Գոռալով վազեց ինչպես հրեղեն.

Եկավ որ քշի մերին տավարից.

Մերն էլ բարկացավ նրա հավարից՝

Մի քիչ կովերից զնաց, հեռացավ,  
Բուղադոռ տալով, նրան մոտեցավ.

Դեռ գոռգոռալով երկուսն էլ կրծքից,  
Հեովից բարկացած կանչեցին իրար.

Վազելով եկան թուրք, հայ օբեքից՝

Մեծ բուղակովին հայելու համար.

Խառնվել են միմյանց մեր, մանուկ ու ծեր,

1 Վրանների խումբ:

2 Շատա:

3 Ցուլ:

Հըռ-հռի ձայներ, հայ-հնչ, դըղըղյուն,  
 Ամեն կողմերից լավում են հարցեր.  
 «Ո՞րն է երկուսից տանում հաղթություն»:  
 Երկու բուռեն էլ ահեղ զարկերով,  
 Պողերով, ոտքով գետինն են փորում.  
 Երկու բուռեն էլ ուռած կրծքերով  
 Հպարտ բշարով, կռիվ են դռում.  
 Մեկ պինդ ոլորած պոչն օձի նման  
 Լախտ արած ուժգին՝ գետինն են ծեծում,  
 Մեկ ինչպես վերջին ահեղ հրաման,  
 Նորից հերստտած կռիվ են բշում.  
 Սալմանի բուռի մընդավը<sup>1</sup> փրփրում,  
 Տեսնողի վրա սարսափ է բերում:  
 Հանկարծ երկուսն էլ նայելով խեթ-խեթ,  
 Դեռ կոթանելով<sup>2</sup>, գնացին ետ-ետ,  
 Եվ նորից եկան պատրաստի զարկով,  
 Մոտեցան միմյանց դեմ տված կողքով.  
 Մընդավն ու պողեր տալով պահապան,  
 Երկու ճակատներ դեմ ելան, կպան,  
 Թըրանխք, հայ, թըրանխք պողերով, գանգով  
 Ջարդում են իրար անխնա զարկով:  
 Խառնվում են նորից բեռ ու սարվորներ,  
 Նայում են կռվին սրտի տրոփով.  
 Թնդում են նորից հըռ-հըռի ձայներ.  
 Եվ բուռաները զարնվում են թափով.  
 Փահլեանի պես հենց են պրտրտվում,  
 Որ կուրծք ու ճակատ փրփուր է պատում.

1 Ուսը:

2 Պողերով սպառնալով:

Գեռ չըրբխկում են, զըրբխկում զարկեր,  
Սալմանի բուղեն ետեա է նայում:  
Կրծքին ու կողքին բացվել են վերքեր,  
Բայց նա երկյուղից դեռ չի հեռանում:

«Չունց հան, գունց», հանկարծ գոռացին.

Սալմանի բուղեն զըրբխկաց գետին.

Մեր բուղեն էնպես գոռաց ու բչաց,

Որ նրա ձենից սար ու ձոր թնդաց.

Իսկ բեզի հաղթված բուղեն հեալով,

Վեր կացավ հազիվ, գնաց կաղալով:

Երբ մենք պարտվածին ծաղր ու ծանակով

«Ղնւ» էինք տալիս, թքում ու մրում,

Բեզը կոտրված մեր հաղթանակով՝

Նոր կովի համար ատամ էր սրում.

— էս բուղակովի ամոթի մրից

Մենք չենք ազատվել ոչ մի ժամանակ,

Մինչև ոխ չառնենք էն բինաներից,

Մինչև որ չուտեն նրանք դազանակ:

Հենց որ լսեցին վերջին խոսքերը,

Կալմեջ արին մեզ դազանակներով.

Թրերը հանած՝ հասան բեզերը

Ու վրա տվին թունդ աղմուկներով:

Քար ու դազանակ ամենքի ձեռքին՝

Իրար դեմ ելան տղամարդ ու կին,


Երկու կողմերից կարկուտից վարար՝

Քարերով, փայտով ջարդում են իրար,

Հենց որ բեզերը հաղթված սարվորին

Քշելով, հասցրին արխաջի՝ ծերին,

1 Անասուկների բացօթյա հանգստյան տեղը:



Հանկարծ սարիցը մի ձեն որոտաց.

«Ո՞ւր եք փախչում, ո՞ւր, գետինը մտած.  
Միք վախիլ, տվեք, տվեք, բեզերին,  
Որ հանգիստ թողնեն ձեզ էս սարերին»:

— Փախեք, հայ, փախեք, վա՛յ, կանչեց բեզը,  
Ավագ-որսկանն է սարիցը վազում.  
Փախեք, հայ, փախեք, մտեք դադեքը,  
Նրա հետ կռվել մեզ էլ չի սազում:

Էլ շունչ չմնաց դուրսը ոչ ոքից,  
Ավագն է նրանց դեռ կանչում դադից.  
«Ո՞ւր եք փախել, ո՞ւր, է՛յ, դուք՝ նամարդներ,  
Դուրս եկեք, տեսեք ձեր հողեառին,  
Թե չէ կպոկեմ բինա-դադաներ,  
Ձեմ թողնիլ մեկիդ շունչը բերանին»:

Բեզերից ոչ մի իգիթ դուրս չեկավ.  
Սալմանի հայրը կորացած մեջքով  
Եկավ որսկանի ոտները ընկավ,  
Ու նա հեռացավ ծերի խնդիրքով...


Եվ վառ խարույկի շուրջը բուրբա՞ծ՝  
Տեսած ու լսած արկածն են պատմում,  
Եվ մեծ ու փոքր աղանջներ լարած՝  
Աշուղ-Գիքոյի երգերն են լսում.

Պատմում է, երգում աշուղն անցյալից,  
Չորերում տեսած հին իգիթներից.  
Կրակին գցած կաղնի մեծ դերան՝  
Սարվորն էլ արձուն լսում է նրան:

— Էն օրից էս օր բեզերն ամոթով  
Հանեցին գլխից կռվի մտքերը՝  
Պատմում են թուրք, հայ՝ ահ ու սարսափով  
Ավագ-որսկանի արած գործերը.

Պատմում են, որ նա ինչպես գորավար  
Թիլիամը ունի չար դև ու սուրբից,  
Որ նա չի լինիլ գնդակի ավար,  
Ոչ էլ կմեռնի նա մարդու ձեռքից.  
Որ երկու բան է Ավագ-որսկանը  
Ամենից մոտիկ պահում իր սրտին--  
Մեկը Ղրիմու հին հրացանը,  
Մեկն էլ մինուճար սիրուն Ալ-վարդին.  
Ու դրանց հետը ժանտ օձի նման  
Եվ մի լուռ վիշտ է միշտ նրան կրծում,  
Որ աստված տղա չտվեց նրան,  
Որ Ավագ անուհն պահեր իր աղգում.  
Որ միշտ տեսնելիս սիրուն Ալ-վարդին,  
Զգում է նա իր դատարկ վախճանը,  
Եվ սև մտքերը փաթաթած սրտին՝  
Տանջում են նրան դուրսը թե տանը:

«Մի օր աղջիկս ես մարդու կտամ,  
Ինքս էլ ձերացած աշխարհից կերթամ.  
Հրացանս կմնա պատիցը կախված,  
Ժանգում ու փոշում անբան շաղախված,  
Երկար խանչալս էլ, արծաթով պատած,  
Վախկոտի մեկը կառնի իր փողով,  
Հաղար փորձանքի արնով աշխատած  
Անուհն էլ հետը կծածկի հողով.  
Սիրուն Գուգարքն էլ առանց պահապան,  
Քանդելու կգա ամեն մի անբան.  
Էլ չեմ դուրս գալ ես խոր գերեզմանից,  
Էլ չեմ պցիլ իմ հին հրացանից»:  
Երկնքի գրկում լողում է լուսին,  
Դեռ նստոտած են ձեր, երիտասարդ,  
Ավագ-որսկանի, Ալ-վարդի մասին



Մարուշկի շուրջը լսում են հանդարտ:  
Կաղնի գերանը կրակին ընկած՝

Սոսա բոցերով դեռ լույս է սփռում.  
Ճարճատում է նա, բռնկում հանկարծ,  
Հետն էլ աշուղի երգերը վառում.

Տեսած ու լսած անթիվ դեպքերով  
Եվ մեկը մյուսից արժան գործքերով  
Դեռ երգում է նա և այն հաստատում,  
Որ առաջինն է Ավագն աշխարհքում,  
Նրանից իդիթ, նրանից հսկա  
էլ թուրքում, հայում, ոչ մի տեղ չկա.  
Եվ ուշի-ուշով նստոտած համառ՝

Խնդրում են նորից տղերքն աշուղին.

«Այլի ջան, այլի, երգիր մեզ համար,  
էլ չենք քնելու մենք լուսնի շողին»:

Բոլորի ուշքն էլ որսկանը տարավ,  
Մարում են կամաց խարուշկի կայծեր,  
Ջահել տղերքը դեռ երգի ծարավ՝  
Ավելցրնում են կրակին վայտեր.  
Որը հողնելուց գլուխը թեքած՝  
Նիրհելով կամաց, զարթնում է հանկարծ,  
Որն էլ վաղուց է անուշ խրոռացնում,  
Ավագ-որսկանին երազում տեսնում:  
Երկնքի գրկում լողում է լուսին,  
Ննջում են արդեն ձեր, երիտասարդ,  
Ավագ-որսկանի, Ալվարդի մասին  
Լուսինն է խորհում երկնքում հանդարտ:

Արևը չելած՝ սարվորն արթնացալ,  
 Նորից ձորերում աղմուկ բարձրացալ,  
 Նորից սայլի տակ ճրոռում է ճամփան,  
 Փռուփրոում հարսի քողն ու դաթիբան.  
 Գալար յուրդերը ամպերի տակին  
 Աչքերը գցած քոչվորի ճամփին՝  
 Ժպտալով հակինթ ցողերով առատ,  
 Կանչում են կարծես բույրով անարատ:  
 Կանաչի վրան ավթավան՝ ձեռքին՝  
 Կրոնասեր թուրքը չօքեց նամազի,  
 Ձեռները զգուշ տանելով միրքին՝  
 Աղոթք է անում աստծուն մեկուսի:

## 2.

Կես օր է արդեն. կանաչ Լավարից  
 Իջնում է հանգիստ ոչխարը կթի.  
 Կթվելով մաս-մաս, անցնում է բերից<sup>2</sup>,  
 Լսվում է անուշ վրձնոցը կաթի:  
 Հովիվ, հովվուհի նստոտած շարքով՝  
 Կթում են ուրախ և անհոգ խնդում,  
 Երբեմն էլ այրված անուշիկ երգով  
 Սեր են դարթեցնում մեկ-մեկի սրտում:

<sup>1</sup> Ջրամանի տեսակը:

<sup>2</sup> Ոչխար կթելու տեղը:

Վերջա ցավ արդեն ոչխարի կէքը  
 Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը.  
 Մեկն էլ գդակը շարժելով օդում,  
 Դեռ դառնարածին՝ «հէյ, եկ» է կանչում.  
 Երկար շանցնելով, սարի գագաթին  
 Գառների կայտառ հոտը երևաց.  
 Խառնվելով նրանք մայրերի հոտին,  
 Բերկրանքի հույզով մայում են ցրված.  
 Կանչում են, բայում դառնն ու մաքին,  
 Անուշ ձայներով փնտրում են միմյանց.  
 Որը գտնելով իրա դառնուկին,  
 Ծծել է տալիս, փայելով սրտանց.  
 Որը խաղում է մոր հետ կուշտ փորով,  
 Որն էլ մնում է տխուր մայելով.  
 Եվ ամեն անգամ դառը մեր տալիս<sup>1</sup>,  
 Կարծես թե անուշ համերգ են տալիս:  
 Եվ շուտ ջոկելով մայրերը դառնից,  
 Հովիվը քշեց նրանց դեպ արոտ,  
 Մհակն էլ ուսին դառները բինից  
 Տարավ դառնարած սառն աղբյուրի մոտ:

3.

Հովիվ, դառնարած մի տեղ խմբվելով,  
 Լախտի են խաղում, առույգ թռչկոտում.  
 Հրճվում են նրանց կայտառ խաղերով  
 Ծերերը ծածկված գառան մուշտակում.  
 Ամեն մի նրանց ճարպիկ թռիչքով

<sup>1</sup> Մայրերին տալիս—ծծեցնելիս:

Հիշում են վաղուց կորած մանկություն,  
 Շուկելով ճերմակ միրուքը ձեռքով,  
 Կանչում են՝ «նամանդ, նամանդ ծերու թյուն»<sup>1</sup>  
 Մեկն իր մուշտակը մի կողմն է ձգում  
 Եվ դիտմամբ խառնվում տղերանց խաղին,  
 Մի լախտ է խլում, ոլորում ձեռքում  
 Եվ առիթ տալիս անվերջ ծիծաղին.  
 Կանչում են. «Ա.թո՛ւ, լախտը թռցրո՛ւ,  
 Մեր պապի մեջքը մի լավ տաքացրո՛ւ»...  
 Ա.թոն էլ լախտը ոլորած ձեռքին՝  
 Տանում է, բերում մեր պապի մեջքին...

Մի տեղ ձիերը տրանդի տալով,  
 Փրոռացնում են, սարերը փախչում.  
 Զահել տղերքը քամանդ<sup>1</sup> բռնելով,  
 Նրանց հետևից սլուրադ<sup>2</sup> են թռչում,  
 Մի խամ, չնստված վալրի քուռակի  
 Ամեն կողմից էլ կալմեջ են անում.  
 Ով նրան մենակ բռնի ու թամքի,  
 Նա մի քալաղի նամառ<sup>3</sup> է տանում.  
 Բայց տաքացել է, կատաղել խամ ձին.  
 Տղերանց վրա ծառս-ծառս<sup>4</sup> է լինում.  
 Երկար քամանդը քաշելով վզին,  
 Խեղդում են նրան և թամքը դնում.  
 Զուռնեն էլ՝ թողած մի կողմը լախտին,  
 Փչում է արդեն տաք-տաք ջրիդին.  
 Տղերքը միմյանց առաջ են քշում,  
 Ծերերը դարձյալ խոր ախ են քաշում:

1 Բամանդ—ձի բռնելու պարան:

2 Զիարչավ առաջ ընկնելու նախատակով:

3 Մրցանակ է տանում:

4 Հետին ոտներին վրա կանգնում—ծառանում:

Հարս ու աղջկերք սափորը ուսին՝  
 Գնում են խումբ-խումբ աղբյուրը ջրի.  
 Գողում են նրանց ժպտուն երեսին  
 Բոլոր գույները Գուգարք լեռներին.  
 Եվ բյուր ծաղկանիշ նախշուն շորերով  
 Անցնում են նրանք ուղին հոտավետ,  
 Եվ թարմ կուսական հմայիչ բույրով  
 Մրցում են սարի ծաղիկներին հետ:  
 Եռում է խաղը հարսների դիմաց,  
 Նայում են միմյանց աչքերի տակով.  
 Կարմրում են, ժպտում կույսերը կամաց,  
 Անցնելով անուշ սիրո տրոփով:

Բայց, այ քեզ հրաշք, մի շուկ անցավ.  
 «Ալ-վարդն է գալիս, Ալ-վարդն է գալիս».  
 Եռուն ջիրիդը խկույն դադրեցավ,  
 Բոլորն էլ սառան նրան տեսնելիս:  
 Հուր-հրին տալով քողի արանքից,  
 Նրա աչքերը հանեցին խելքից.  
 Էլ ոչ ջիրիդ կա և ոչ էլ գուռնա.  
 Ալ-վարդի նետին ո՞վ կդիմանա.  
 Ջիրիդներն ընկան հուժկու ձեռքերից,  
 Այս ու հառաչանք թռան կրծքերից.  
 Ջուռնան էլ մոռցած լախտն ու ջիրիդին՝  
 Նրանց տեղ զլեց այրող բայաթին.

Ջելրանի նման  
 Բնից դուրս գալը,  
 Սափորը ուսիդ  
 Սարին սուրալը,  
 Այս, էդ աչքերիդ  
 Վառվառն հուրը,



Սիրուն պատկերիդ  
Նոր կյանքի բույրը,  
Շուրթերիդ բացվող  
Վարդը ժպտալիս՝  
Մեզ, սիրուն աղջիկ,  
Հանգիստ չի տալիս:  
Ա՛յ, սիրուն աղջիկ,  
Ա՛յ սարի աղջիկ,  
Շուտ-շուտ դուրս արի  
Աղբյուրը ջրի:  
Մեն-մենակ դու ես  
Ծաղիկը սարի,  
Մեն-մենակ դու ես  
Զարդը աշխարհի:  
Առանց քեզ սարին  
Հատնում է բույրը.  
Առանց քեզ աղբյուրում  
Ցամքում է ջուրը:  
Ծաղիկ ու դալար,  
Աղբյուրը դուլալ,  
Սուրալով արի,  
Շունչ տուր, դարդարի:  
Ա՛յ, սիրուն աղջիկ,  
Ա՛յ, սարի աղջիկ,  
Հասիր մեզ սիրով—  
Սափորիդ ջրով:  
Ա՛խ մեր սրտերը  
Վառել ես հրով,  
Բայց դեռ ապրում ենք  
Հեռվից քո բույրով.

Ապրում ենք, ջերան,  
 Երգերի բոցում,  
 Ինչպես բյուրեղում  
 Վարդերի ծոցում:  
 Ջահել սրտերում  
 Քո վառած հուրը  
 Չի մարում, աղջի,  
 Սափորիդ ջուրը:  
 Ա՛յ, սիրուն աղջիկ,  
 Ա՛յ, սարի աղջիկ,  
 Թեկուղ մեզ վառի,  
 Շուտ-շուտ ջուրն արի:

Այլ-վարդի համար ան ինչ հառաչում  
 Գուգարք լեռների ամեն մի ձորից,  
 Այլ-վարդի համար մեղուն է թռչում  
 Լուսնի առաջին խամ մեղրի ծորից.  
 Ուտում են աչքով ամենքն Այլ-վարդին,  
 Բայց սերն անհայտ է դեռ նրա սրտին.  
 Նա դեռ ապրում է երազների մեջ,  
 Ինչ նրան այրել չի սերը անշեջ.  
 Բայց էն էլ ասած՝ Ավագի ահից  
 Ո՞վ կարա անցնել Այլ-վարդի մոտով,  
 Կամ թե փախցնել նրան աղբյուրից՝  
 Ո՞վ կարա իսկի անցկացնել մտքով:

5.

Սև ստվերները հսկա լեռներից  
 Չորերն են ընկել, մեկ-մեկի գրկել:

Լուսնի նղջուրը մռայլ ամպերից  
 Հալածված դեմքը դեռ չի ազատել,  
 Թանձր եթերյան սև քողը դեմքին  
 Վազվզում էր նա սոված ու անքուն  
 Նայելով հերթով բոլոր օրերին,  
 Հսկում էր նրանց գիշերը արթուն.  
 Օրոր էր երգում առուն ձորերում,  
 Մարում էր մեկ-մեկ կրակն օրեքի,  
 Բայց ականակիր սարի խավարում  
 Մենակ մի կայծ էր դողում ճրագի.  
 Ղարախաչ<sup>1</sup> սարի գիծ գազաթներին  
 Լուսինն էլ գերի մնաց ամպերին.  
 Այնտեղ ծովիանն է խաղում, որոտում,  
 Հրեղեն գոտին երկնքով պատում:  
 Շրփշրփաց անձրև, ամեն մի տեղով  
 Առուներ դառան պղտոր հեղեղով:  
 Զարթնելով քնից սարվորը հանկարծ,  
 Ամրացրեց դագի հին ծակ ու ծուկը.  
 Տավար ու ոչխար իրարով ընկած՝  
 Խառնեցին միմյանց գառն ու հորթուկը.  
 Հովիվը հասավ ազդարար ձայնով  
 Հավաքեց նրանց դեպի արխաջը,  
 Բայց դեռ լավում էր տխուր ոռնալով  
 Գոլանից<sup>2</sup> փախած շների հաջը:

Սարեր ու ձորեր ահից դողալով,  
 Արձագանք տվին փայլակ-կայծակին.  
 Լեռների որդին մթին գիշերով

<sup>1</sup> Լոռվա և Շիրակի սահմանում ձգված բարձր սարը:

<sup>2</sup> Շան նստելու և հոտին հսկելու տեղը:

Անցնում էր հեղեղ՝ մի սև ձի տակին՝  
Ձին առանց զարդի, սանձի ու թամբի  
Ցատկում էր արագ ժայռերի վարսեր,  
Ինչպես մի ստվեր սևակնած ամպի,  
Թռչում էր գետեր և դար ու փոսեր,  
Իսկ դոփյուլները պինդ սմբակներից,  
Արձագանք տալով խորին ձորերում,  
Կայծին են տալիս և հանկարծ մարում.  
Ռնգներից ամպի փրփուր է հոսում,  
Խառնվում պղտոր վշտան հեղեղին.  
Ձին իր հեծվորին այնպես էր սազում,  
Ինչպես, որ նետը իրեն աղեղին:

Գոռում էր ճչում ահավոր կիրճում  
Փրփրած բաշով սևացած ուրկուն<sup>1</sup>,  
Բայց ձիավորը մի աղոթք մտքում  
Դեռ մրմնջալով, բշում էր անքուն.  
«Էս ուրկունիցն էլ թե դուրս թռավ ձիս,  
Մուրաղ եմ անում գնամ Սուրբ Սարգիս.  
Հասվեհաս եմ հան, ճրագ եմ տեսնում,  
Գիշերս կմնամ Սառն-աղբրի բինում.  
Հենց որ անձրևը մի քիչ դադարի,  
Նորից կբռնեմ ճամբեն անտառի»:  
Աչքերը հառած բինի ճրագին,  
Հեծվորն էր այդպես ձիուն մրմնջում,  
Նրա սև բաշը ոլորած ձեռքին,  
Կարծես ուզում էր հասնել մի շնչում...

<sup>1</sup> Հեղեղից առաջացած մեծ դետ:

Փռուացրեց սև ձին, դուինեց սմբակով,  
 Նեախի պես ցցվեց արխաաջի ծայրին.  
 Մի շուռն դուլանից վեր թռավ հաջով  
 Եվ թարշարժ արավ քնից սարվորին.  
 Շներն աղմուկով զայրացած հասան,  
 Այն ձիավորին կալմեջ արեցին.  
 Իսկ հովիվները՝ «ո՛վ ես» ու «քի՛մ սան»  
 Նրան խավարից մեկ-մեկ ձայնեցին:

— Մթին գիշեր է, կորցրել եմ ճամփես,  
 Պատասխանեց նա, հյուր եմ եկել ձեզ:

Ու թսուռնից մոտիկ վեհ, բարձրահասակ,  
 Հերքը ալևոր ձյուռնից էլ ճերմակ,  
 Արծաթապառայան դաշույնը գոտկին,  
 Հին արկածների կնճիռներ դեմքին,  
 Սև-մաղ յափնջին ուսերին բազմած,  
 Երկար չիբուխն էլ բերանին սեղմած,  
 Կանգնելով ծերը ալաշխի շեմքին՝  
 Խրոխտալի ձայնով կանչեց ճամփորդին.

«Ե՛կ, ճամփորդ ախպեր, արխաաջի մոտով,  
 Գուրսը անձրև է խառը կարկուտով.  
 Մինչև հաստես դու էլ իմ տանը,  
 Պատառ չեմ դնիլ ես իմ բերանը.  
 Ե՛կ, ախպեր ջան, եկ, դոնադն Սատժուռն է,  
 Անմեռ աշխարհն էլ իգլիթ մարդուռն է».  
 Հեծվորը եկավ ծերի հրավերով,  
 Սև ձին էլ տակին սև ամպի նման,  
 Ուռած ոնգներից թառանջ քաշելով,  
 Թռավ ու կանգնեց նրան հանդիման:

— Բարի իրիկուն, ասաց նա, սարվոր,

Վաստ օր չտեսնի գլուխդ ալևոր.  
Թող վառ լինի միշտ բինում ճրագդ  
Թող տա փը չառնի վերջին գնդակդ:  
«Բարին արևդ. համեցեք, որդի,  
Թող ձիդ օրյուկի<sup>1</sup> հանդումը ծառան,  
Գու էկ անձրևից այաչուխ մտի.  
Ալ-վարդ ջան, վեր կաց, դու էլ տաքարան:  
Որսի խորոված շամփրի, պատրաստի,  
Կուշտը սովածին մանր կբրդի»:

Այդպես պատվերներ տալով Ալ-վարդին,  
Ալաչուխ տարավ ձերը ճամփորդին,  
Որի յափնջից ծորում էր ջուրը,  
Ինչպես մամռտած ժայռից աղբյուրը.  
Բայց նա թափ տալով շորերը շեմքին,  
Մոտեցավ նստեց ծերունու կողքին:  
Թուրն ու դաշույնը կեռ արծաթապատ,  
Գնդակ-վառողի ամանը գոտկին,  
Չախամախի հրացան գուգված տասնարանդ,  
Շահմար<sup>2</sup> օձի պես լուռ փարված մեջքին,  
Ջենք ու զրահում, արծաթում մտած<sup>3</sup>  
Ճրագի լույսով հյուրը շողշողաց:  
Սերն ու կարագը առաջ բերելով,  
Ալ-վարդն եփում է դեռ տաքարանը.  
Մի քանի խոսքով սուփրեն օրհնելով,  
Ծերունին դարձավ աղոթարանը:  
- Թող նրան տանի սելավն ու գետը,  
Ո՛վ աղ ու հացի օրենքն ուրանա,

<sup>1</sup> Օրյուկել՝ արածելու համար կապել երկար թուկով:

<sup>2</sup> Օձերի թագավոր:

Ո՛վ դոնադ եկած թշնամու հետը  
 Ձի նստիլ ուրախ մարդի-մարդանա<sup>1</sup>.  
 Թշնամի կլնես թե ինձ բարեկամ,  
 Դուռս բաց կլնի քեզ ամեն անգամ.  
 Քանի որ կուզես իմ ալաշուխում  
 Սիրտդ բաց՝ արա ինձ հետ կերուխում:  
     Երբ շամփուրները մեկ-մեկ շարելով,  
 Դարսում էր կույսը կաշմրած շեղջին,  
 Կամ խորովածը արագ շրջելով,  
 Բերում էր դնում հյուրի առաջին,  
 Ցուրն աչերը հոնքերի տակից  
 Ընկնում էին միշտ փայլուն գեներին  
 Եվ ալեծածան մազի արանքից  
 Նա գաղտագողի դիտում էր հյուրին:  
 Խիտ գանգուրները հանկարծ ցնցվելով,  
 Մերթ ալտերն էին վարդի պես փայլում,  
 Մերթ շամփուրները նորից շարելով,  
 Հյուրի սիրտն էլ էր նա հետը այրում:  
 Ե՛վ անքնություն, և՛ երկար ճամփեն  
 Վերացան իսպառ ճամփորդի մտքից.  
 Սև-սև աչքերը շանթելով արդեն,  
 Անցան շեշտակի սուր նրա կրծքից.  
 Մոռցավ ինքն իրան, երկիր ու երկին,  
 Երերաց անուշ, անսովոր դողով,  
 Եվ կյանքի գնով գողցած նժույգին  
 Նա մոռցավ միայն երկու աչերով:  
     Տեսնելով հյուրի թևի արյունը,  
 Ծերունին հարցրեց նրա անունը,  
     «Ինչի՞ չես, որդի, դարդդ ինձ ասում,

<sup>1</sup> Տղամարդորեն:

էդ ինչ արյուն է թևիցդ հոսում.  
Ե՛կ, դու մի ծածկիր, անունդ ինձ բախշի,  
Ձե՛՛ թողնիլ, որ քեզ էդ ցավը մաշի:  
Ավագ որսկանն եմ Գուգարաց երկրի,  
Գռիվների մեջ հերթս ձերմակած.  
Քեզ նման ես էլ հազար վերքերի  
Խոռոչներ ունեմ մարմնիս ընկած»:

— Տեր ինքը հաստատ պահի քո տունը,  
Վաղուց եմ լսել քո մեծ անունը.  
Չախ թևիս միջին գնդակ է մնացել,  
Ինչ անես, ապի, դժվար է հանել:

«Ա՛նհող կաց, սրդի, ինչ վերք էլ լինի,  
Աղջիկս նրան դեղ ու ճար կանի:  
Նա սովորել է հանգուցյալ մորից,  
Որ բժշկում էր գնդակ ու սրից:  
Ա՛լ-վարդ ջան, աղջի, ճար ունես, դէ՛, տես.  
Ջահել է, մեղք է, կռնատ չթողնես»:

— Վ Ալ-վարդն եկավ դեղի փաթեթով,  
Գնդակը հանեց մի երկար կարթով,  
Վերքը նա լվաց, դեղը փաթաթեց,  
Վրան մետաքսի թաշկինակ կապեց.  
Իսկ հյուրն Ալ-վարդով աջնքան հիացավ,  
Որ գնդակ ու ցավ իսպառ մոռացավ:

«Դե՛, պատմիր, որդի՛, գլխիդ անցածը,  
Թե որտեղ հասավ քեզ էդ արկածը»:

— Ա՛յ, ապի՛, լսի՛ր սրտիս գաղտնիքը,  
Ո՛չինչ չեմ ծածկիլ, կպատմեմ անվախ. —  
Եվ հյուրն արյունով աչքերը լիքը  
Դեռ վազրի նման նետեց աջ ու ձախ.

— Բայց առաջ բախշի ինձ, Ավագ-որսկան,

Որ ինձնից ճարպիկ գողեր էլ չկան,  
Իսկ թե քեզ մտտ էլ դուրս գամ մեղավոր,  
Ինձ համար եղիր դու խիստ դատավոր:

«Իդուր ես եկել, մտել իմ տունը,  
Ինձ մտտ չես գտնիլ քո վերկությունը.  
Հոգիս էլ կտամ ես իմ դոնադին,  
Բայց չես խնայիլ, պաշտպանել գողին:  
Գիշերս կտամ ես քեզ ապաստան,  
Կզարթնես քնից, կերթաս ապահով,  
Հետո կփնտրեմ ես ինչպես որսկան  
Եվ կանեմ մի օր քեզ զնդախորով:  
Գե, պատմիր, տեսնեմ, էդ ինչ ահարկու՝  
Սարերը ընկած ավազակ ես դու»:

— Գարուն էր, անի. սարը քոչելիս  
Մի քանի հարուստ թուրք աղալարներ՝  
Աղբյուրի ափին նամազ անելիս,  
Օրյուկել էին իրանց ձիաներ:  
Երբ ես անտառից հանկարծ դուրս եկա,  
Նրանց միամիտ բարով տվեցի,  
Նրանք ծաղրեցին և հրոհրուալով  
Հարցրին ինձ. — է՛յ, ձու գողցար, թե ձի:

Էն օրից թեև տարիներ անցան,  
Բայց նրանց ծաղրը մնաց իմ սրտում,  
Եվ ես երգվեցի էն ծաղրի թույնով  
Լինել ավազակ գող և մարդասպան,  
Գիշերը անցնել բեգերի բինով  
Եվ մահ գոռալով, քշել ամեն բան:  
Հենց է՛ն ինձ ծաղրող մեծ աղալարին  
Գիշեր ու ցերեկ փնտրելով շրթուն,  
Վերջը ես գտա Ղարախաչ սարին,

Ուր նա հայտնի է ինչպէս մեծատունս  
Սալան-բեգն է նա, քաջ և անվանի,  
Տավար-ոչխարի հոտերով հարուստ,  
Բայց ամենից լավ մի սև ձի ունի,  
Որ աշխարհ արժի մենակ արտաքուստ.  
Չի հասնիլ նրան հին հեքիաթների  
Թեկուղ հրեղեն ձին իր թևերով,  
Չի հասնիլ նրան և գնդակների  
Կարմիր տժժոցը մռայլ գիշերով.  
Սռաջուց գիտե նա՝ թե փորձանքը  
Ե՛վ թե հեծվորի սրտի բաղձանքը:

Մթին գիշեր էր, հենց գողի գիշեր,  
Երբ Սալան-բեգի օբին մոտեցա.  
Հենց որ օրցուկը բերից կտրեցի,  
Վեր կացավ հանկարծ մի շուն դուլանից,  
Երկաթի ոտկապն էլ որ կտարեցի,  
Քղրդաց օբեն հարայի ձենից.  
Մարդիկ վազում են, շները հաչում,  
Բայց ես փորըսող գետնին եմ կալչում,  
Եվ հարահրոցի թունդ տրաքարոքոցին  
Թռչում եմ, սանձում ոտկապով սև ձին:  
Նորից դղրդաց, գնդակ որոտաց.  
«Տարան հա՛, տարան բեկի սևուկը».  
Բայց ես նետի պես ալանջը մտած,  
Քշում եմ նրանց գոված նժույզը.  
Տրա՛ք, հա՛, տրա՛ք գնդակներ թոան.  
Խառնվելով օբեն, գոռում էր. «տարան,  
Հասե՛ք, հա՛, հասե՛ք, դալի-էրմանին  
Կենդանի թաղեց իզիթ Սալանին»:

Խրխնջում էր ձին, ոտկապը կրծում,



Փրփուլն ամպի պես ոնգներին գցում  
Եվ կրակ կտրած էնպես էր վազում,  
Որ կասես հեռվից գնդակ էր բրզզում,  
Թե որ ես նրան հեծած չլինեի,  
Ով գիտեր, թե ողջ էստեղ հասնեի»...

Հանկարծ զրույցը կարոն կտրելով,  
Դիմեց որսկանին, այսպես խնդրելով.

— Հերիք է, ամպի, ես լույսն եմ ընկնում,  
Տավար ու ոչխար արոտ են գնում.  
Թե նամարդ եմ ես, զարկիր գնդակով,  
Թե չէ, ճամփա տուր ինձ քո օրհնանքով:

«Համբերիր, կարո, համբերիր միքիչ,  
Մի օր էլ կլնես թուլերի փրկիչ.

Էս գիշեր պատմած գլխիդ անցքերը

Մոռցրին ծերիս ճերմակ հերքերը.

Թե գող լինեիր շատի պես անմիտ,

Ես չէի ասիլ քեզ երբեք իգիթ.

Բայց երբ որ գող ես մենակ թասիբից,

Նամարդ բեզերին պատժելու համար,

Օգնություն կգա քեզ ամեն սուրբից

Եվ դու կլինես անհաղթ զորավար.

Մարդը նամարդին թե մյոհտաջ կանես,

Ավագ-որսկանից պատիժդ կառնես:

Դե, տուր խանչալդ, օրհնեմ իմ սրով,

Որ քեզ տեսնելիս դողա թշնամիդ,

Քեզ պես թասիբի ավազակներով

Լցվեն մեր երկրի սար, դաշտ ու հովիտ»:

Ծերը պատյանից դաշույնը հանեց

Եվ, խաչ քաշելով կարոյի սրիս,

Պապական ծիսով նա քաջին օրհնեց.

Ապա օրյուկից նրա ձին բերին.  
Եվ կարոն թաավ առուլդ սատյոււնով,  
Կպավ մերկանդամ սևուկի մեջքին.  
Խրխնջաց սև ձին ու փունջյոււնով  
Թոշկոտաց հուժկու հեծվորի տակին:  
Եվ սիրտն ու հոգին թողած Ալ-վարդին,  
Նա մնաս բարով ասաց Ավագին:

7.

Օեզում է արդեն, բայց կարոն չկար՝  
Ալ-վարդը գնաց՝ ինչպես խելագար՝  
Ալաչուխ մտավ, սափորը ուսեց,  
Երգի մրմունջով աղբյուրը վազեց:  
Ձիու հետքերը հանկարծ նա գտավ,  
Այնտեղից պոկեց մի փունջ կանաչ խոտ  
Եվ համբուրելով նրա մեջ դրավ  
Կարոյի թողած գնդակը արնոտ:  
Բայց խոր ձորերում կամաց մարելով,  
Դեռ զրնգում էր պայտերի դոփյուն.  
Նրան երբեմն արձագանք տալով,  
Ձուլվում էր երգի անուշիկ հնչյուն.  
Ալ-վարդն էլ հենված դեռ ժայռին գաղտնի՝  
Կարծես ուզում էր երգողին գտնի:  
Բայց երգ ու դոփյուն խառնվելով իրար,  
Հնալով անցան անտառից անտառ.  
Իսկ թևից հանած գնդակը ծոցում  
Այրում է նրան, որպես հնոցում.  
Վիրավոր հյուրի պատկերն էլ սրտում  
Սափորը ուսին երգում է տրտում.—

— Մեր տուն եկող ձիավոր,  
Արծրվի պես վիրավոր,  
Էդ ուր թոար դու շուտով  
Սև ձին նստած յափնջով:

Ա՛խ, ուր թռավ էն տղեն.  
Սիրտս հանեց նա տեղեն:

Ա՛խ, հեռացար դու աչքես,  
Չես հեռանում վառ մտքես.  
Դեռ տեսնում եմ նստած ձին՝  
Վրեդ քաշած յափնջին:

Ա՛խ, ուր թռավ էն տղեն.  
Սիրտս հանեց նա տեղեն:

Ամպ ու հեղեղ, մութ դիշեր,  
Լարվար սարի սև փեշեր,  
Դո՛ւք էն տղին զրահով  
Պահպանեցեք ապահով:

Ա՛խ, ուր թռավ էն տղեն.  
Սիրտս հանեց նա տեղեն:

8.

Օրվա հողսերից հողնած արևը  
Ննջում է հանգիստ սարի քամակին.  
Ամպերի նման սարի վերևը  
Բինեքի ծուխն է փարվում ահագին:  
Սարեր ու ձորեր լուռ են հոտերով,  
Աղբյուր ու ծաղիկ արթուն տենչերով

Դալար սարերի կենսատու օղում  
Երազների մեջ սեր՛ են թըպրտում:

Ավագ-որսկանը, հալըը Ալ-վարդի,  
Չիբուխը բերնին դեռ նստած արթուն՝  
Հիշում է մտքում կյանքը որսորդի,  
Դիտելով ծուխը գիշերը արթուն.  
Եվ արյունաներկ ծեր հիշողության  
Ամեն մի մոռցած, կորած անկյունում  
Սև ծխը մռայլ ամպերի նման  
Անցած օրերն են մեկ-մեկ բարձրանում.  
Իսկ ալաշուխում պառկած առանձին  
Գլուխը բարձին ալբում է Ալ-վարդ.  
Քնի մեջ կարծես թուել է հողին  
Մի աշխարհ՝ անպերջ անուշ ու անգարդ:

Մարել են ճրագի կայծերը աղոտ,  
Ննջում է ամբողջ օրեն մրաված.  
Հանկարծ հեռվում թնդաց մի որոտ,  
Խոր քնից իսկույն Ալ-վարդը դարթած՝  
Աչքերը հառեց ծերունու դեմքին  
Եվ պատմեց հուզված մի երագ մթին.

«Քնած էի ես, տեսա երագում  
Մի սիրուն պախրա անտառից շվաղեց,  
Մեր կովերի հետ կանգնած արխաջում՝  
Աղաքարերից մի քիչ աղ լիղեց.  
Նա պողեր ուներ մեկ-մեկի վրան  
Անտառում բսած ծառերի նման.  
Ինչպես մի ընկեր կարոտած սիրով,  
Եկավ փաթաթվեց, փարվեց իմ շորով.  
Բայց մեկ էլ տեսա ապիս բարկացած,  
Հրացանը լցրեց, դարձավ դեպի մեզ.


Ես էլ վեր թռա տեղից վախեցած,  
Կանչեցի նրան, խնդրելով էսպես.  
Այլի ջան, ապի, մի սպանիր պախրան  
Թո՛ղ, բռնել եմ ես, որ պահեմ նրան.  
Սպիտ չլսեց. խեղճ պախրան ընկավ,  
Կասես թե դնդակն իմ սրտովն անցավ»:

Վերջն այսպես խոսեց խոր հորանջելով,  
Հարևան բինի մի պառավ կնիկ,  
Որ թափանցել էր գարի գցելով,  
Մեծ երազների խորհուրդ ու գաղտնիք.  
— Երազն է անվերջ մի սիրուն աշխարհ,  
Ուր միշտ ապրելով ինչպես ոգիներ,  
Կարոտ սրտերը դտնում են իրար.  
Շնչում են անուշ, թափում արցունքներ:  
Հսում եմ, Ալ-վարդ սրտիդ տրոփից՝  
Գու՛ր դեռ դողում ես մահվան սարսափից:  
Ո՞վ է բաժանել կյանքը երկուսի,  
Ո՞վ է խանգարել հանգիստը կույսի:  
Գնդակ ու պախրա, լացը կուսական  
Խաղերը չեն եղել անհոգ մանկական,  
Այլ մարմնից ազատ երազի ոգին  
Գուշակել է քո մռայլ ապագան.  
Ե՛վ տանջանք է նա պատրաստում կրծքին,  
Ե՛վ խոստանում, թե լավ օրեր կգան:  
Կազատվես, Ալ-վարդ, դու չար փորձանքից,  
Թե պախրա չընկնի հորդ գնդակից»:

Ե՛վ Ալ-վարդն այնպես պառավից լսեց,  
Որ այն երազից ցավ չկա իրան.  
Երազահանն էլ ծերին համոզեց,  
Որ այնուհետև որս չանի պախրան:

Խոր ձորի միջին մի ժայռի կրճքից  
 Աղբյուր է բղխում ուրախ քչքչան.  
 Նրա ձայները անուշ բյուր երգից՝  
 Սարեցու համար վաղուց սրբացան.  
 Սիրո-աղբյուր է նա հնուց ասվել,  
 Սիրուն կույսեր են միշտ նրան ուխտել.  
 Եվ գուշակել է ջրի ելևէջ,  
 Թե ով երջանիկ կլինի սիրո մեջ:  
 Դարերից ի վեր աղբյուրը հոսում,  
 Դեռ սիրո մասին երգեր է հյուսում,  
 Եվ գլգլալով ձմեռ ու ամառ,  
 Դեռ նա երգում է սիրելու համար:  
 \* Գնում է Ալ-վարդ դեպ Սիրո-աղբյուր՝  
 Իրանց տան համար տանելու պաղ ջուր:  
 Հասնելով ձորը մի նեղ կածանով,  
 Դեռ ծաղիկներ է նա շարում կրճքին  
 Եվ գյուլումներից մեղմ անուշ ձայնով  
 Երգում է Սիրո-աղբյուրի ափին.  
 Սարերն էլ նրան ուրախ քրքիջով  
 Արձագանք տվին ժայռերի միջով, —

«Աղբյուր, աղբյուր, ջան աղբյուր,  
 Զուրդ գլգլան աղբյուր,  
 Վարդը բացվում է բույրով,  
 Սերն ապրում է համբույրով.  
 Թե որ գտնես իմ յարին,  
 Մոմ կվառես քո քարին»:



— Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, ջան Ա՛լ-վարդ,  
Բյուլբյուլն էրվում է անվարդ.  
Հեովից տանջված քո սիրով՝  
Դեռ կուվում են հուր-սրով.  
Բայց ամենից՝ աշխարհում  
Քաջ կարոն է քեզ սիրում:

«Ա՛ղբյուր, ա՛ղբյուր, ջան աղբյուր,  
Ջուրդ գլգլան ա՛ղբյուր,  
Վայ թե ապիս իմանա  
Ու մեզ վրա բարկանա.  
Եթե կարոն ինձ տանի,  
Վայ թե նրան սպանի»:

— Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, ջան Ա՛լ-վարդ,  
Բյուլբյուլն էրվում է անվարդ.  
Թե որ մեռնեք երկուսով  
Աշխարհի մեջ նամուսով,  
Սիրո շեմքում ձեր ճրագ  
Վառ կմնա անկրակ:

10.

Սև ամպի նման սև ձիավորը  
Սարից աղբյուրն է թափ առած քշում,  
Վեր թռավ հանկարծ կույս ուխտավորը,  
Վազում է բինեն սիրո մշուշում:  
Աղբյուրի ափին Լավարի կույսին  
Կարոն սիրել է սափորը ուսին.  
Թեկուզ և զարկեն գնդակ մահացու,  
Կարոն ընտրել է նրան հարսնացու:

Զարթնելով սերը երկու սրտերում,  
Աղբրի ավերն են միշտ նրանց քաշում.  
Փնտրելով միմյանց դալար ավերում,  
Սիրո երգերով սրտերն են մաշում:

«Լավարա բարձր սարից  
Շատ սիրուն է աշխարհը.  
Ամպի տակի աղբյուրից  
Ջուր է տանում իմ յարը:

Աղբյուր, ծաղիկն ու լալը<sup>1</sup>  
Շատ առատ են Լավարին.  
Բաց իմ սիրած մարալը  
Արժի արար-աշխարհին:

Սարի շուշան մատերով  
Հանեց նա իմ գնդակը,  
Սարի նախշուն աչերով  
Անցավ սրտիս հատակը:

Այս, էն աղջիկն աչք-ունքով  
Զարկեց ինձ նոր գնդակով.  
Ջուր է թռչում իմ սև ձին—  
Սիրտս կպավ Ալ-վարդին»:

— Ո՞ւր ես թռչում ձիավոր,  
Չորերն ի վեր վիրավոր.  
Բո գնդակը վառ բոցում  
Չէ՞ որ մնաց իմ ծոցում:

Այս, հեռացար մեր բինից,  
Ինձ գրկեցիր դու քնից.  
Ետ արի, ետ, բինեքով,  
Ամպի նման քուլեքով:

Ետ արի, ետ, ձիւնվոր,  
Մուտ գիշեր է ահավոր.  
Թոիր սարի բամակով  
Կայծակի պես փայլակով:

Դե, թըն, արի, ձիւնվոր,  
Արծալի պես թեւավոր.  
Ետ արի, ետ Լալվարը,  
Մենակ մնաց մարալը:

### III

#### 1.

Ուր սուր ձերպերով ահեղ ցիր ու ցան  
Լեռներն են բազմած բնության արձան,  
Ուր մութ ամպեր են գունդագունդ զինվում,  
Փայլակ-կայծակով իրար հետ կռվում՝  
Չարներով միմյանց երկիր ու եթեր,  
Թռչկոտում են հուր կայծակի շանթեր,  
Խաղում են, գոռում ճայթյուն որոտով,  
Ծեծում լեռներին, ծաղրում կարկուտով—  
Այնտեղ գիշերվա խավարի միջին  
Մի խարույկ վառվեց Լալվարի լանջին.  
Չորերի քաջեր որսի են եկել,  
Կրակի շուրջը կարգով նստտեղ:

Ոմանք շահուժ են շողշողուն գեներքեր,  
Կարմիր բոցերից փայլում են դեմքեր,  
Ոմանք խորովում եղնիկ կամ վարազ  
Երկար ձողերով շեղջի վրա շարած,  
Եվ լուռ նստոտած լափնջի տակին՝  
Շարունակ լարված լսում են մեկին:  
Ինչպես խոր ձորում գնդակ ու վառուդ՝  
Թնդում է մեկի ձայնը կրակոտ,  
Այնպես է գլխի անցածը պատմում,  
Կարծես Լավարին ամպ է որոտում. —

«Անցնելով հազար արյուն-փորձանքից,  
Մահվան հետ ընկեր-ախպեր եմ դառել,  
Նամարդ չի պրծել դեռ իմ գնդակից,  
Քլխիս մազի չափ որսեր եմ արել.  
Դեռ ուժ ունեմ ես վագրից առավել,  
Գնդակս էլ որսից խկի չի շեղվել.  
Բայց աղջիկս արդեն տեսավ երազում,  
Որ որս անելը էլ ինձ չի սաղում.  
Ես էլ ուխտում եմ արյուն չթափեմ,  
Այլ շահելներիդ համար աղոթեմ,  
Որ դուք էլ գնաք իմ թողած հետքով,  
Պահեք ավանդը մեր հին պասպական,  
Մեկն իր կատարած արժանի գործքով  
Իմ տեղը լինի նոր Ավագ-որսկան»:

Չարմացած ձերի վերջին խոսքերով,  
Տղերքը դարձան նրան հարցնելով.

— Քեզնից ձորերում՝ գող ու մարդասպան  
Դողում են մարդիկ, հարամի, դազան.  
Ով որ գնդակիդ ձենը լսում է,  
«Ավագ-որսկանն է էլի», ասում է.  
Թեկուզ դու լինես հարցուր տարեկան,  
Ո՞վ կարա լինել քեզ նման որսկան:

«Մի շաբաթ էլ կա դեռ Վարդավառին,  
Որ սար ու ձորից ուխտ գան կալվարին.  
Երբ որ էն օրը գան ծեր, պատանի,  
Թող, ով որ քաջ է, նամառը տանի:  
Մինչև որ անցնեն էս չորս-հինգ օրը,  
Տակն ու վրա արեք դուք սարն ու ձորը.  
Ո՛վ որ մեծ որսով կգա Սուրբ-Սարգիս,  
Նա էլ կլինի ժառանգն Ավագիս»:

2.

Երբ գիշերը անց, հենց լուսադեմին,  
Խոսքը վերջացրեց Ավագ ծերունին,  
Տղերքը մեծ-մեծ որսերի հուսով  
Պարկ ու հրացան գցեցին ուսով,  
Ո՛րը սարերին, ո՛րը ձորերում  
Հրացանը ձեռին որս է որոնում:  
Մի տեղ եղնիկն է անմեղ բառաչում,  
Մի տեղ պախրան է հանկարծ հառաչում,  
Մի տեղ էլ արջին որջից հանելով,  
Կովում է մեկը իր սուր խանչալով:  
Գազանը տալով որսորդին ապտակ,  
Դեռ պաշտպանվում է նրա սրի տակ.  
Վայրի վարադը ժանիքը սրած<sup>1</sup>  
Մացառն է նետվել ուխտ վիրվրած.  
Նորից գնդակ են հրացանը լցնում,  
Նորից վազելով ետևից հասնում.  
Եվ որս ու որսկան սյուրազ<sup>1</sup> ընկնելով,

<sup>1</sup> Արշավ:

Խեղդում են շատին շան ոհմակներով:  
Ոմանք էլ կոքում լիճկապ են անում  
Եվ փախածներինց նորինց կոտորում:

3.

Ամեն տեղ գնդակ, կրակ, որոտում,  
Բայց ինչի՞ կարոն որս չի պատրաստում.  
Նա թափառելով հրացանը ձեռին,  
Դեռ նոր էր գտել մի հարմար դարան  
Եվ մտածելով իր որսի մասին,  
Կուռ գանդատվում էր բախտից ինքն իրան.  
«Ես էլ եմ ուզում գնալ Սուրբ-Սարգիս,  
Ես էլ եմ ուզում սեսնել Ալ-վարդիս.  
Բայց ինչ արած որ դեռ նրա բախտից  
Որս չդուրս եկավ որսառատ հանդից.  
Երնեկ անմուրազ ես ձորում մնամ,  
Քան թե ես դատարկ կալվարը գնամ:

Մեն-մենակ ես եմ  
Սարերին թշվառ.  
Ո՛չ բինա ունեմ,  
Ո՛չ էլ յուրդ, կալվար:  
Դաշտին թե սարին  
Քուռն չունեմ, կալվար.  
Կարոտած յարից  
Կուր չունեմ, կալվար:

Որս կուզեմ, կալվար,  
Որ տանեմ յարիս.

Որս կուզեմ, Լալվանք,  
Ճար արան դարդիս»:

4.

Ուր առվակները մանուկ կարկաչով  
Դիմում են ձորեր, լցնում հառաչով,  
Ժայռերից ժայռեր թափ առած ուժով  
Թնդյուն որոտով փրփրում է ջրվեժ,  
Մռութը կիտած հին ապառաժով  
Ջարդվելով անհույս, երգում է վրեժ.  
Ուր զեփյուն մեղմիկ ցրվելով բույրը,  
Սուզում է սիրտը վայելքի ծովում,  
Իսկ թարմ շուրթերի կույսի համբույրը  
Ծաղիկների հետ անմեղ բարևում.  
Ուր զգացումն է բռնկում հուժկու,  
Աղավնուցը հեղ, արծվից ահարկու,  
Որսի հրաթափ գնդակի թռիչ,  
Ջրվեժի վայրի երգը ձորերում,  
Ամեն մի հնչյուն անուշիկ, թովիչ  
Անցնում է սիրտը, նրանով փարվում, —  
Այն կամարի տակ անսահման կապույտ  
Լալվարն է դարձնում հարսի պես անփույթ:  
Գո. դարձի հսկան բարձր եթերից,  
Գլուխը հազիվ հանած ամպերից՝  
Ժպտում է, խնդում փոքր լեռներով,  
Որպես ծերունին իրա թոռներով:  
Այսօր նա ժպիտն անուշ ճակատին՝  
Ամպ-երեսկալը գցած երկնքով,  
Ջուզվում է ուրախ Սուրբ-Սարգսի ուխտին

Գուգարք աշխարհի զարդ ու պճրանքով.  
Իսկ նրա բարձր դալար գագաթին  
Մնշուք քարակուլան առանց տանիքի,  
Հին սուրբ խաչքարը բազմած քարափին  
Գրավում է սիրտը ուխտովոր բինեքի.  
Սար, դաշտ ու հովիտ անթիվ ցիր ու ցան,  
Փրփրուն գետեր, դալար անտառներ  
Մի նվիրական նեղ, մոլոր կածան  
Այնտեղ է տանում բոլոր բինաներ:

5.

Ասում են՝ ով որ միշտ վառ հավատով  
Գալիս է Լավար որևէ ուխտով,  
Խնդրում, աղերսում քաջ Սուրբ-Սարգսին,  
Հասնում է անշուշտ սրախ մուրադին.  
Եվ թե մարդ, թե սար, թե ժայռ, թե բլուր,  
Հաղթված գլխներով խոնարհվելով լուռ,  
Գալիս են նրա զորության ծառա,  
Որպեսզի հասած ցավը վերանա:  
Ոմանք հասնելով քրտինքն երեսին,  
Հանգստանում են Լավարի ուսին,  
Ոմանք էլ հեռվից երկար շարքերով  
Աչքերը հառած գեպի սուրբ սարը՝  
Գալիս են բարձված հազար մեղքերով,  
Որպեսզի գտնեն փրկության ճարը:  
Արդեն ջերմեռանդ ծեր, պատանի, կին՝  
Հազար գունավոր զգեստներ հագին,  
Մատուռի շուրջը խուսկ ու մոմերով  
Պատույտ են գալիս բոբիկ ոտներով:

Բերել են այնտեղ և՛ հիվանդներին,  
Ե՛վ խաչ-փաթաթուկ<sup>1</sup> թուլլ ընկածներին.  
Ո՛րը մի ցավից, կամ չոռից տկար՝  
Ընկել է կծկված սուրբի ոտները.  
Որն էլ ուշաթափ, մորուց ցավազար  
Իրար է զարկում պինդ ատամները,  
Բերանը փրփրած տանջվում չարաչար,  
Քաջ զորավարից աղերսում մի ճար.  
Եվ մուրազներով՝ թշվառ, բախտավոր,  
Մոմեր են վառում սուրբ խորհրդավոր:  
«Մուրազատու նվ սուրբ Սարգիս,  
Դու պահպանիր ձմրան բուքից»:

Ամեն տարի պաս ու ծումով  
Մենք ուխտ կգանք խուենկ ու մոմով  
Եվ ծունկ չոքած մենք Լալվարին՝  
Խնդիրք կանենք զորավարին. —

Ջահել—Չիվան մեր սիրածին  
Հասիր որսի դժվար ճամփին.  
Հասիր նրան, որ նամուսով  
Շուտ գա Լալվար մի մեծ որսով:

Երգ ու պարով իրար գրկած՝  
Աղաչում ենք ոտը ընկած.  
Բուք ու բորան տուր դու չարին,  
Անուշ մուրազ՝ սիրած յարին:

Մուրազատու նվ սուրբ Սարգիս,  
Դու պահպանիր ձմրան բուքից»:

<sup>1</sup> Խաչի պատժած անդամալույծներին:

Մի տեղ ուխտովորը նստում է ճաշի,  
 Մի տեղ գնում են կոխին<sup>1</sup> թամաշի,  
 Մի տեղ խնձորը նշան են խփում,  
 Մի տեղ մատաղը դեռ նոր են եփում,  
 Մի տեղ աշուղը լի սուփրի ծերին  
 Բազմած, խփում է սազի սիմերին.  
 Մերթ իզիթների դործերն են դովում,  
 Մերթ նամարդների սիրտը նզովում.  
 Մի տեղ նաղարան զլում է պարին,  
 Զուռնա-բայաթին կանչում է ջարին.  
 Մեկը տեսնում է իր նշանածին,  
 Մեկը նշանում մտքում սիրածին.  
 Մի տեղ էլ անմեղ կուսական սրտեր,  
 Զգալով սիրո առաջին շանթեր,  
 Զեռք ձեռքի տված երգում են, պարում,  
 Ամենքի դեմքին ժպիտ է փայլում:

— Զինարի պես բոյ ունես,  
 Սարի ծաղկի հոտ ունես,  
 Ափսոս քեզ, որ տխուր ես —  
 Անուշ յարից լուր չունես:

— Ես սարերին ուխտել եմ,  
 Որ միշտ մատաղ ես կանեմ.  
 Թե դա յարս մեծ որսով,  
 Սերս նրան բաց կանեմ:

Ավագ-որսկանը սարին  
 էսօր հանդես բաց կանի,

1 Գոտեմարս:

Ա՛խ, երանի էն յարին՝  
Ավագությանն արժանի:

6.

Իսկ այնտեղ խմբով անվանի քաջեր  
Ձենք ու զրահը դցած ուսերով՝  
Բերել են եղնիկ, եղջերու, արջեր  
Եվ պարծենում են իրենց որսերով:  
Բայց հանկարծ լավեց կանացի հառաչ.  
Մի խուսբ աղջիկներ վազեցին առաջ  
Եվ հեկեկալով, հայտնեցին ծերին.

— Սիրուն Ալ-վարդին բեզերը փախցրին...

Չորս-հինգ ձիավոր զինված հրացանով՝  
Անցնում էին լուռ մոլոր կածանով.  
Հենց որ մեզ տեսան, նրանք կանգնեցին,  
Իրար հայտնելով առաջ վազեցին.

«Մի տես, էն սիրուն, լեյլի աղջկան,  
Նրա պես հյուրիք երկնքում չկան.  
Դալի-էրմանու գողցած սևուկն էլ,  
Արար աշխարհն էլ մտքես հանեց նա:  
Դե, տեսնեմ, տղեք, ով կարա բռնել.  
Նրան փախցնողը ջաննաթ կգնա»:

Եվ նրանք տարան սիրուն Ալ-վարդին,  
Կորած ձիու տեղ կապեցին թարքին.  
Մենք լսում էինք դեռ նրա հարան.

«Ա՛պի ջան, սպի», կանչում էր՝ «տարան»:

Ծերուհին կանգնած քարափի գլխին՝  
Չայրացած ուժգին դարձավ ամբոխին.

«Հէյ, տղեք, սև սուգ պահեցեք,  
Դափ ու գոռնայի ձենն էլ կտրեցեք,  
Տեսնում եմ, որ դուք շատ ուժ էք թափել  
Եվ գազանների մեծ որսեր բերել.

Բայց ոչ ոք չիլնիլ դեռ Ավագ-որսկան,  
Մինչև չազատի գերի աղջկան.

Վայ թե բեգերն էլ անպատկեն նրան,  
Ամոթ, նախատինք կմնա հավիտյան»...

Էլ ժպիտ չմնաց ոչ մեկի դեմքին,  
Վիշտն ու վրեժը տիրեց ամենքին.

Լռեց և՛ քեֆը, և՛ ամեն շշուշ,  
Մարեց արձականք ձորերում լուռ-մուշ:

Դեռ ժայռից նոր էր իջել ծերուհին,  
Մի տրաքոց լավեց կաղնուտի ձորում:

«Դե, հասեք, տղեք, հասեք էն ձենին,  
Կռիվ է էստեղ, մարդիկ են գոռում»:

Ուխտավորը մոռցած հանդեսի օրը,  
Շեշտակի վագեց կաղնուտի ձորը:

Եվ տեսավ ահտեղ աղբջուրի փոսում  
Ընկած բեգերից արյուն է հոսում.

Կարոն Ալ-վարդի դեմ կանգնած արի՛  
Երգում է որսած աչերը յարի.

«Ալ-վարդ, Ալ-վարդ, սև աչերից  
Ես ընկել եմ սար ու ձոր.

Ալ-վարդ, Ալ-վարդ, սև աչերից  
Դադար չունեմ ոչ մի օր:

Քեղ տեսնելով, կռիվ ու ջարդ,  
Չար մտքերս ցրվեցան.

Նրանց տեղը, սիրուն Ա՛լ-վարդ,  
 Գու ևս կապել ծիածան:  
 Էն օրվանից շոր ժայռն էլ է  
 Անուշ, բուրում, կանաչում.  
 Էն օրվանից սիրաս էլ է  
 Արնածարավ քեզ կանչում:  
 Առ դենքերս դու մեկ-մեկ,  
 Ես հաղթված եմ քո սիրով.  
 Առ դենքերս, որ երբեք  
 Ես չեմ ավել խիստ կովով:  
 Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, սև աչերից  
 Ես ընկել եմ սար ու ձոր.  
 Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, սև աչերից  
 Ես հավում եմ օրեց օր»:

8.

Հետո ուխտվորի հետ նա միասին  
 Գնաց պատմելով բեզերի մասին.

«Հրացանս լցրած երկու գնդակով՝  
 Ես նստած էի կաղնուքու կողքին.

Մեկ էլ ի՛նչ տեսնեմ, դալիս են շարքով  
 Չորս-հինգ ձիավոր մի աղջիկ թարքին:

Տեսա որ մեկը ճանաչս է դալիս,  
 Ասլան-բեզին էր նմանը տալիս.

Աղջիկն էլ ասի, թե խեղճ է թշվառ,  
 Տես, թե ի՛նչ որսով ետ կերթամ Լավար.

Հանկարծ լսեցի՝ «վա՛յ, տանում են, վա՛յ»...:

Տեսա որ կապածն աղջիկ է և հայ.

Մի գնդակ թողի հենց ծառի կողքից,

Ասլան-բեգն ընկնով իր ձիու մեջքից.  
Ես նորից լցրի և նորից ընկան,  
Մի մարդ ու մի ձի հաղիվ թե պրծան.  
Ալ-վարդն էլ եղավ իմ որսը անգին,  
Ահա բերել եմ, որ տամ Ավագին»:

9.

Ուխտավորը խառնվեց, փնտրում է նրան,  
Ուզում է տեսնել սով է քաջ տղան:  
Ծերը դաշույնը հանեց իր գոտիկից,  
Տվեց Կարոյին ամբոխի դիմաց  
Եվ համբուրելով նրա ճակատից,  
Գողգոշուն ձայնով օրհնելով, ասաց.

«Ապրիս դու, Կարո, երկար տարիներ,  
Որ միշտ ազատես անմեղ գերիներ.  
Լավարն էլ լինի թող խոսքիս վկան,  
Որ քեզ օրհնում եմ ես Ավագ-որսկան»:

Նորից նույն զուռնան-նաղարան հնչեց  
Եվ քաջ Կարոյին կյանք և ուժ մաղթեց.  
Ուխտավորն էլ վերջին ջերմ համբույրներով  
Իջավ Սուրբ-Սարգսից նեղ կածաններով.  
Եվ պար ու երգով Լավարից նա ցած  
Գնաց իր սրտի մուրազը առած.  
Կույր աշուղներն էլ երգ հորինեցին  
Եվ նոր իգիթին գովաբանեցին:

— Կարոն է զարկել  
Բեգերից մեծին,  
Կարոն է վրկել  
Սիրուն Ալ-վարդին:

Թույլերի պաշտպան  
Չկա նմանը.  
Օրհնել է նրան  
Ավագ-որսկանը:

Թնդում են լեռներ  
Երգերով գովքի —  
Կարոն է, Կարոն  
Արժանն Ավագի...

#### IV

##### 1.

Աշունն էլ եկավ Գուգարք աշխարհում  
Սարին ու դաշտին այլ կյանք է եռում.  
Խուզելով գառան, ոչխարի բուրդը,  
Քոչել է բինեն թողնելով յուրդը.  
Լեռներից զվարթ, գիրացած հոտեր  
Չմեռվան համար իջել են դաշտեր.  
Յուրդերը դատարկ սեին են տալիս,  
Աղբյուր ու ծաղիկ ողբում են լալիս.  
Մենակ խաղում է, թռչկոտում պախրան,  
Սարեր ու ձորեր մնացին նրան.  
Արժիփն էլ տխուր նստած ժայռերին՝  
Որսեր է փնտրում իր սոված փորին:

Դաշտերում հողնած խեղճ ու նաչարին  
 Հավ հաց ու գինով պարգևեց տարին.  
 Փոխվելով սարից ամենքն արանը<sup>1</sup>,  
 Լցրին բարիքով հորն ու մառանը.  
 Հասել են արդեն մրգեր մեղրածոր,  
 Կանաչ թփերը բռնած դաշտ ու ձոր,  
 Հասել է ամրան միջօրյան տապին  
 Բյուր շարաններով խաղողը ճիթ-ճիթ,  
 Քաղում են նրանք առվակի ափին.  
 Հնձանից անուշ մաճառը շիթ-շիթ  
 Կարասն է լցվում ուրախ քրքիջով.  
 Եվ փրփրալով դեռահաս գինին  
 Հանգստանում է միայն թակիչով<sup>2</sup>.  
 Նորից խաղալով հասնում է բերնին,  
 Եվ հուզված, դժված խոր դետնի գրկում<sup>3</sup>  
 Իր ստորերկրյա խուլ երգն է երգում:  
 Վերջացավ թե չե անկրակ եփը,  
 Սկսվեց իսկույն գյուղացու քեֆը,  
 Զուռնա-դհուլի ձայնը զլվում է,  
 Հարսանիքների ծայրը բացվում է:

— Սլ-վարդ ջան, անջի, եկ լսիր դու ինձ,  
 Ես օրհնում եմ քեզ հայրական սիրով.  
 Ե՛կ, թեև ծանր է բաժանվել քեզնից,

<sup>1</sup> Դաշտ

<sup>2</sup> Նոր գինու եփը իջեցնելու գործիք:

Բայց նշանաված ես դու իմ երգումով:  
Վաղ ես ունեի մի ողջում — ախպեր,  
Նա զենքով որսի գնալ չգիտեր,  
Արջերի հետն էլ միշտ կոխ էր բռնում,  
Կռների գոռով իր որսը անում:  
Ողորմած հողի Արջակեր-Մոսին,  
Էդպես էր նրա ավել անունը,  
Սի օր խոսք զցեց իր տղի մասին.  
— Իմ ու քո չկա, մեկ է մեր տունը.  
Թե որ քեզ լինի մի աղջիկ զավակ,  
Արի նշանենք տղիս հետ, Ավագ.  
Նրանց պսակենք կենդանի օրով  
Ու մենք հեռանանք հավիտյան սիրով.  
Թե աստված էսպես մեր ուխտը կամի,  
Խոսք տուր, որ լինենք իրար խնամի:  
Եվ ես երգվեցի, երբ դու մեծանաս,  
Մոտենց Աթոյի հետ կամուսնանաս.  
Վաղուց է պառկած Մոսին հողումը,  
Վաղուց հեռացավ նա փուչ աշխարհից.  
Բայց չեմ մոռացել ես իմ խոստումը,  
Որ բարձր է երկրի ակն ու գոհարից.  
Իգիթի խոսքը օրենք ու կարգ է,  
Նամարդ ապրելուց մեռնելը փառք է:  
Ե՛կ դու՛ լսելով ծնողիդ կամքը,  
Հավատարիմ կաց քո նշանածին,  
Եվ միշտ հիշելով մորդ խնամքը,  
Ապրիր ու մեռիր միշտ մեկի բարձրին»,  
Եվ մի համբույրով գթոտ հայրական,  
Ավագ-որսկանը օրհնեց աղջկան:

Հանկարծ խեղճ կույսը գլուխը թեքեց,  
 Դեմքը այլապիկեց, նա դողաց լուրից,  
 Եվ մատաղ կուրծքը նետի պես շանթեց  
 Այն ավետիքը, որ լսեց հորից:  
 Նա ճնշված գաղտնի ներքին հուզումով,  
 Չյունի պես ճերմակ ձեռքերը կրծքին,  
 Դեռ սպասում էր նախազգացումով,  
 Ինչպես անմեղ զոհ ծերունու կողքին:  
 Թեև արցունքը նա շուտ կուլ տալով,  
 Սիրո կոիվը ծածկեց իր հորից,  
 Բայց սիրտն ասում էր ուժգին արովալով՝  
 «Մարդու չեմ գնալ բացի կարոյից»:  
 Եվ դեռ հայտնի չէր որսկանին սերը,  
 Որով այրվում են երկու սրտերը.  
 Բայց ո՞վ կհմանա՝ սերը կհաղթի,  
 Թե՞ նվիրական խոստումն իզիթի:

Քանի գիշեր է, մինչև լուսադեմ  
 Ծեր, երիտասարդ, այր, կին ժպտադեմ  
 Հազար գունավոր զգեստներ հագին՝  
 Խնդում են բարձր Դևպետի ամին.  
 Հանդես է այնտեղ մեծ հարսանիքի,  
 Զուռնան գլել է վաղուց սահարին<sup>1</sup>:

<sup>1</sup> Առավոտյան երգի եղանակ:

Թնդում է հանկարծ ձայնը Ավագի,  
Հոսում է սպիտակ ու կարմիր գինին.  
Որսկանը առատ վայրի էրեներ,  
Երինջ, ոչխար է հարսանիքին մորթել.  
Եսում են չորսկանի խոշոր կաթսաներ,  
Կրակի ծուխը երկինք է պատել:

Մի տեղ ամբոխը խմբով նստոտած՝  
Անուշ է անում, հարսանիքն օրհնում,  
Իսկ աշուղները, սրցելով հարբած,  
Ավարդի համար երգ են հորինում.  
Մի տեղ սահելով, հարսն ու աղջիկներ,  
Կազմում են ուրախ շրջապարի շարք,  
Մի տեղ ձողերին վառած պատրույգներ՝  
Երեխայք դոռում, վազում են անկարգ.  
Հերթիկների տակ և արձակ բակում  
Թնդում են հազար աղմուկ ու երգեր.  
Փրփրած գինու թասերը ձեռքում՝  
Ուտում են քաշկյան<sup>1</sup>, խորոված, մրգեր:  
Այսօր խնճուղք է մյուս օրն էլ հանդես,  
Յոթ օր, յոթ գիշեր կտևի այսպես.  
Գյուղի աղքատը, ձերն ու պատանին  
Յոթ օր, յոթ գիշեր հյուր են որսկանին:

6.

Հանկարծ Ավագի ջրբեղը ճոճաց,  
«Ջրբեղ է, ջրբեղ ամբոխը ճչաց.

<sup>1</sup> Թոնրի մեջ մսից և ձավարից պատրաստած՝ հարխիսի  
նման կերակուր. կորկոտ.

Դհուրը դմբաց, հեծվորներն անցան,  
 Կազմեցին միմյանց հակառակ շրջան:  
 Ձինված ձողերի սուր նիզակներով  
 Հենց բաժանվեցին երկու բանակի՝  
 Բարձրացրեց փոշին ձին սմբակներով,  
 Գլուխներ պատռեց զարկը նիզակի,  
 Եռում է հանդեսն ահեղ ջիրիդի,  
 Հասնում են արագ, զարկում մեկ-մեկի.  
 Ջեռքներին բռնած թավիշ-թաշկինակ՝  
 Դիտում են հեռվից և հարս ու աղջիկ՝  
 Իսկույն տալիս են նրան մրցանակ,  
 Ով որ նշանին նետում է ճարպիկ:  
 Աթոն էլ եկավ շատ անգամ անցավ,  
 Բայց նա Ալ-վարդից ոչինչ չստացավ.  
 Ձիերի կրծքից քալաղին<sup>1</sup> կապած՝  
 Դեռ փռփռալով, քշում են, թռչում,  
 Բայց չի նկատում ամբոխը հարբած,  
 Որ խեղճ Ալ-վարդն է ամենից տրտում:  
 Շատերը հաղթված մեկ-մեկ հեռացան...  
 Մենակ Ավագը ջիրիդը ձեռքին՝  
 Ինչպես հաղթության վիթխարի արձան,  
 Հասնում էր, զարկում փախչողի մեջքին:

7.

Մութն ընկավ արդեն. փայլում են կրակներ,  
 Նորից հյուրերը նստում են շրջան,

<sup>1</sup> Մետաքսե թաշկինակ:



Լցնելով փրփրած գինով գավաթներ,  
Եռուն քեֆի մեջ կանչում են՝ «հա ջան»...  
Նորից զուռնան է հանում աղմուկը,  
Աշուղը թառին լարում է երգեր.  
Նորից երգում են ծերն ու մանուկը  
Բռնելով ամուր նոր յալլու շարքեր:  
Հարբածների հետ Դևալետը ձորում  
Փրփրած աչքերով ժայռե քնարին,  
Ծփում է տխուր, անվերջ փրփրում,  
Հազար երանի տալով անցյալին:

8.

Երբ հողմն էր փչում, Դևալետը վշտում  
Գիշերվա վայրի մի տխուր համերգ,  
Իսկ սլաղ կայծերով աստղը գենիթում  
Դողալով դիտում մռայլ տիեզերք, —  
Գիշերվա նման մի մուգ սև շալում,  
Ալ-վարդը գաղտնի անտառն էր մտել.  
Իսկ վաղուց ծանոթ մթին դարանում  
Նրան պահապան մացառն էր պատել:  
Նրա համար չէր երկնի կապույտը,  
Նա չէր դուրս եկել իբրև զբոսանք.  
Որպես ջրվեժի թափն ու պտույտը,  
Նրան քշել էր վառ սիրո հոսանք:  
Եվ այդպես փախած մթին գիշերով  
Հայրական տնից, հորիցը գաղտնի՝  
Նա սպասում էր սրտի զարկերով  
Իրա սիրելուն սարերին հայտնի:

9.

Հանկարծ անտառի մռայլ թավուտից  
Լսվեց ամբակի տրոփ ու դուփյուն,  
Քրտինքը հոսեց կույսի ճակատից,

Ճերմակեց, դառավ ինչպես լեռան ձյուն:  
Փայլեցին արդեն ձիու պայտերը,  
Եվ մի ծանոթ ձայն՝ «Ա՛լ-վարդ ջան» կանչեց.  
Կարմրին տվին կույսի այտերը,  
Նա սրտի խորքից ազատ հառաչեց:  
Ա՛յ, քեզ ցանկալի երջանիկ ըոպե,  
Երբ կարոտ սրտեր գտնում են իրար,  
Փշրելով արդելք թեկուզ երկաթե,  
Գտնում են միմյանց երկու սիրահար:  
Հեծվորը թռավ սև ձիուց շտապ,  
Ալ-վարդին հանեց խիտ մացառներից,  
Գրկեց ու սեղմեց կրծքին սիրատապ,  
Համբույրներ քաղեց այտ ու շուրթերից:

«Ա՛լ-վարդ ջան, Ա՛լ-վարդ, Կարոն շշնջաց,  
Ե՛կ շուտով վախչենք, քանի գիշեր է.  
Գիտեմ՝ իմաստուն ձիս որ խրխնջաց,  
Փորձանք լինելը նա զգացել է.  
Ա՛ռ դարաբինաս, կախիր քո վզից,  
Նա պետք կգա քեզ գիշերը ճամփին,  
Մինչև որ թռած անցնենք անտառից,  
Մինչև որ տունս գտնենք քարափին»:

— Թեկուզ սրտումս ցցեն սուր ու նետ,  
Ես պիտի ապրեմ ու մեռնեմ քեզ հետ,—

Ասաց Ալ-վարդն ու բռնկված հույզով  
Ամուր փաթաթվեց կարոյի վզով:  
Փախավ նրա հետ, գլուխն ու ալտը  
Հենած սևուկի փրփրուն բաշին.  
Չարնվելով քարին, զրնգում էր պայտը  
Եվ սերը երգում նրանց աղանջին:  
Մոռցած ծերունի հոր պատվի մասին,  
Կուսական սրտից հուր էր բռնկում.

Սարերից ձորեր թե առած սև ձին  
Թաղում էր դուխունն մթին ծմակում:

10.

Հանկարծ լավում է «հարան ու տարան»,  
Հարսը քատանը լռում է դուռնան.

«Կարոն Ալ-վարդին փախցրեց, տարավ,  
Կարոն ամեն ինչ ոտնատակ արավ...  
Թլնահ անաղուհաց, նամարդ արարքին,  
Անդանակ մորթեց իգիթ Ավագին»:

Ծերը զարկելով գտակը գետնին,  
Խռոված ձայնով դարձավ ամբոխին.

— Էս ութսուն ձմեռ, էս ութսուն դարուն  
Ես կյանք եմ քաշել աշխարհի վրա,  
Բայց չեմ թողել, որ Ավագի անուն  
Մի թեթև բանով անգամ սևանա.  
Էսքան տարի է, որ կովի սովոր,  
Արյունն է եղել ինձ համար քրտինք.  
Էսքան տարի է գլուխս ալևոր  
Չէր կերել էսպես մուր ու նախատինք.  
Բայց գող Կարոյի նամարդ արարքը  
Թաղեց որսկանիս պատիվն ու փառքը:  
Թեև երդվել եմ, որ էլ որս չանեմ,  
Բայց էն նամարդի մուրն էլ ո՞նց տանեմ, —

Ասաց ու ծերը հրացանն ուսեց  
Եվ տրմբտրմբալով խոր ձորը վազեց.  
Ո՛մանք ձիերով, ո՛մանք էլ ոտով  
Վազեցին հետը զանազան ճամփով:

Ավագ-որսկանը շանթիւած ամոթով՝  
 Գնաց, թափառեց անտառ ու ծմակ.  
 Անցավ նա ամեն մի նեղլիկ ճամփով,  
 Ուր որս էր արել ջահել ժամանակ.  
 Բայց ո՛չ փախցնողին, ոչ էլ աղջկան  
 Չգտավ այնքան հետքեր փնտրելով,  
 «Ալ-վարդն ու Կարոն չկան ու չկան»,  
 Ասում է անհույս նա դեգերելով:  
 Արդեն հուսահատ, տանջված և անքուն  
 Անցնելով հոգնած վերջին կիրճերը,  
 Մի խիտ դարևոր մթին ծմակում  
 Հանկարծ նա գտավ ձիու հետքերը  
 Եվ լսեց, ինչպես զգուշ տրոփով  
 Ալ-վարդն ու Կարոն թռչում են ճամփով.  
 «Հէյ, Կարո, Կարո», որսկանը գոռաց.  
 Սիրահարները մնացին սառած.  
 «Էդպես ես պատվում հին աղ ու հացը,  
 Էդպես ես սիրում օրենքն իգիթի,  
 Քեզ նման նամարդ գող արարածը  
 Ինչի՞ չի վաղուց գոհվել գնդակի»:  
 Կարոն շվարած որպես երազում՝  
 Իսկույն հասկացավ, թե ով էր խոսում.  
 Բայց գնդակ տրժժաց, անտառը թնդաց  
 Եվ նա գլորվեց սև ձիուցը ցած:  
 Իջնում է մահը մռայլ թևերով.  
 Նա արդեն գրկեց իգիթ Կարոյին.  
 Ալրված շուրթերը՝ վա՛յ ջուր կանչելով,  
 Կպան փակելով հուրը սիրային:  
 Ալ-վարդն իր գանգուր գեսերն է փետում,

«Վա՛յ Կարո ջան, վա՛յ» անտառն է թնդում...

Եվ դարաբինան պինդ ձեռքին սեղմած՝  
Ալ-վարդը կանչեց հորը դառամած.

«Ե՛կ սալի ջան, եկ անտառից շուտով,  
Ե՛կ, ինձ է՛լ դարկիր մի նոր գնդակով,  
Ա՛խ, անսեր կյանքը ծանր է գեհե՛նից.  
Հավ է հեռանամ էս փուչ աշխարհից,  
Հավ է մի անգամ սիրելով մեռնեմ,  
Քան թե միշտ անսեր թագուհի լինեմ.  
Մեզանից հետո է՛լ սարեր, ձորեր,  
Աղբյուր ու առու ու ըախ, քչքչան,  
Երգեցեք՝ ինչպես կորան մեր օրեր.  
Երգեցեք՝ «Ալ-վարդն ու Կարոն չկան»:

Սև ծխի միջից գնդակը թռավ...

Ալ-վարդը վերջին մահվան տագնապում  
Սիրուն գլուխը գետնի վրա դրավ  
Եվ լուռ գալարված խոտ է պոկոտում:  
Դեռ թրթռում են նրա շուրթերին  
Կյանքի գույները մեկ-մեկ մարելով,  
Սփրթնած վարդը կարմիր այտերին  
Հրաժեշտ է կարդում ընդմիշտ թռումելով:  
Մարում է հուրը սև-սև աչերի,  
Սահում է կյանքը անհուն տենչերի,  
Ծորում են կամաց արյան շիթերը,  
Սպառում կյանքի վերջին ուժերը.  
Եվ ամեն մի նոր ծորած կաթիլով  
Կարծես ասում է՝ կյանք, մնաս բարով:

Վերջին արևը ճառագայթներով  
 Դեռ արևմուտքից անտառի խորքում՝  
 Միրահարների լուռ դիակներով  
 Խաղում է անհող, փարվում ու գրկում.  
 Տրաքոցի վրա հեռու ձորերից  
 Վազելով հասավ հարսընթավորը,  
 Արյուն-արցունք է թափվում աչքներից,  
 Մենակ չի լալիս ծեր հանցավորը:  
 Գզգզված դետեր, դնդակը կրծքին՝  
 Սարսափ էր ազդել Ալ-վարդն ամենքին.  
 Օտար, բարեկամ ողբում են նրան,  
 Անեծք թափելով Ավագի վրան.  
 Կանչում են նրան. «ինչի՞ չես գալիս,  
 Ինչի՞ չես դու էլ մի բերան լալիս»...  
 Բայց նրանց լացը, ճիչն օրհասական  
 Դարձյալ չեն ազդում քարացած ծերին,  
 Եվ անշարժ կանգնած ծերունի հսկան՝  
 Նայում է միայն նրանց կոծերին:

Անտառան հենված նա նվիրական  
 չին աղ ու հացի պատվի օրենքին՝  
 էլ չէր սփսոսում միակ աղջկան.  
 Այլ բան էր դդում իգիթի հողին:  
 Թեև նա վերջին օրը ծերության  
 Ներկեց իր միակ որդու արյունով,  
 Բայց համոզված էր, որ արդարության  
 Ձի դավաճանել դեռ ոչ մի բանով.

Որ ամսոսանքը և լացն ու կոծը  
 էլ չեն բուժելու սրտի սև խոցը,  
 Այլ նրան միայն օրենքն իզիթի  
 Իր անդարձ ուժով մի օր կդատի:  
 Մերթ թռչում է նա դեպի ապագան,  
 Ուր սովերներով դատի պիտի դան  
 Տմարդ սերնդի տգեղ արարքը  
 Եվ հին իզիթի պատիվն ու վառքը.  
 Մերթ լուռ, քարացած, առանց արցունքի  
 Դեպի նոր բանող բլուրն է դառնում,  
 Մերթ նրա դեմքը թաղվող հանցանքի  
 Տխրության ամպն է հանկարծ մռայլում.  
 Մերթ անշարժ կանգնած հրացանը ձեռին,  
 Ինչպես դարավոր լեռների արձան,  
 Նա հուժկու մեջքը դեմ տված ժայռին՝  
 Նայում է թաղմանն անթարթ ու անձայն:  
 Եվ հին կնճռոտած, ապառաժ դեմքով  
 Կարծես ծաղրում է դեռ լալկանների,  
 Որոնք հանձնում են հողին խնամքով  
 Իր հաջող որսած սիրականներին:

14.

Հանկարծ զոռ տալով երկար չիբուխին,  
 Նա վերջը դարձավ լալկան ամբոխին.

«Հեյ գիդի հա՛, հեյ, իզիթ ժամանակ,

Անցար, գնացիր, թողիր ինձ մենակ.

Ո՛ւր են առաջվա սերն ու հավատը,

Պապերից դրած օրենքն առաջին.

Իզիթ չէր ասվում էն տղամարդը,

Որ չէր խոնարհվում սուրբ աղ ու հացին՝  
 Արար աշխարհի օրենքների դեմ  
 Ես նրանից մեծ օրենք չգիտեմ:  
 Եվ ինչ արարած, ինչ ադամորդի,  
 Կոտրելով պատիվս, անուսնս իգիթի,  
 Ապրում է մենակ ինքը նամուսով,  
 Դրացունս պատվից գցելու հուսով:  
 Թեկուզ աշխարհն էլ դուր անի իրան,  
 Իսկի տղամարդ չեմ ասիլ նրան:  
 Մարդիկ մանրացան մեղի նման.  
 Արցունքն է դառել ցավերին դարման.  
 Բայց ողբն ու լացը էլ ի՞նչ չեն ազդիլ,  
 Ծով էլ որ դառնամ, արցունք չի կաթիլ:  
 Հեյ գիդի հա՛, հե՛յ, իգիթ ժամանակ,  
 Անցար, գնացիր, թողիր ինձ մենակ:  
 Հեռացե՛ք դուք էլ, թողե՛ք միանամ  
 Ժայռ պապերիս հետ, ես էլ քարանամ»:

Ասաց ու լռեց ծերը գլխակոր  
 Ինչպես վիթխարի մի ժայռի բեկոր:

15.

Էն հին վանքերի բարձր գմբեթից  
 Ձեն հնչում մահվան զանգի ձայները,  
 Եվ շարականից, բուրվառ ու խաչից  
 Ջրկվեցին նրանց պաղ մարմինները.  
 Հարսընքավորի ողբըն ու լացը  
 Եվ սև նժույգի խորին թառանչը,  
 Աշնան հողմի հետ արձագանք տալով,  
 Երգում են ձորում թաղման շարական,  
 «Ա՛խ, Ա՛լ-վանդ, Կարո՛» լուռ հառաչելով,


Փորում են նրանք մի խոր գերեզման,  
Եվ սիրակորույս գույգ նշխարները  
Հանձնում են ցավով հայրենի հողին.  
Իսկ բլուր դարձած սիրահարները  
Պատմում են սիրո արկածն անցողին:

16.

Իսկոն ափսոսանքով ամբոխը գնաց.  
Անտառում մենակ որսկանը մնաց.  
Նա քաշվեց հեռի մութ ծմակները,  
Հսկա ժայռերին եղավ դրացի,  
Ուր չեն որոտում ոչ գնդակները,  
Ո՛չ լավում ձայնը մարդկության լացի.  
Գլուխ չթեքած մարդկանց օրենքին՝  
Նա եղբայրացավ հավերժ տարերքին:

ՎԵՐՁԱԲԱՆ

Երբ որ բացվում են վայրի վարդերը,  
Երբ գարնան բույրով ձորն է կանաչում,  
Գալիս են այնտեղ մատաղ կույսերը,  
Այ-վարդին իրանց սերը մրմնջում.  
Մի-մի կտոր շոր թուփից կապելով,  
Հիշում են նրանք արցունք թափելով.  
Եվ այն մամռապատ մենակ բլրակը  
Նոր կյանք է առնում հին կաղնու տակը:  
Երբ եղջերուն է այնտեղ բառաչում  
Կամ եղնիկն անհող վրայից թռչում,  
Որսորդն էլ՝ աղբրից պաղ ջուր խմելով,  
Անցնում է որսի հեռքից վազելով —  
Հանկարծ ցուլց տալով բլրակն ընկերին,  
Իսկնում է վաղուց անցած գեպերին:  
— Իու ջահել ես դեռ, լավ չես ճանաչում,



Այ՛-վարդն ու Կարոն այստեղ են հանգչում:  
Ո՛ւր են առաջվա մարդիկն ու սերը,  
Ավագ-որսկանի արած որսերը...

Ասում են, երբ որ ամպի փեշերը  
Փովելով սարից, ձորերն են գրկում,  
Լսվում է հանկարծ մթին գիշերը  
Մի խոր հառաչանք ժայռերի կրծքում.  
Ու ամպերի մեջ Ավագ-որսկանը  
Գալիս է հսկում իր աղջկանը.  
Եվ նորից ծածկած նա վիշտը ներսից  
Փախչում է նամարդ մարդկանց երեսից:



Պատ. խմբագիր՝ Ղ. ԿոմուՆի  
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան  
Սրբագրիչ՝ Հ. Ղազարոսյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Տառախչյան

ՎՖ 03319. Պատվեր 153, տիրած 5000, Տպագր. մամ. 4½: Հեղ. մամ.  
Հանձնված է արտագր. 31/X 47 թ. Ստորագրված է տպագր. 6/V 48 թ.

Հայպետհրատի № 1 տպարան, Երևան, Լենինի փող. № 65:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028595

25884

ԳԻՆԸ 5 Ռ.

A  $\frac{\text{II}}{28595}$